



ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

Լուս Անճելըսը Պետք Ունի Դիւանագէտ Հիւպատոսի

Չորս տարիներ առաջ Լուս Անճելըսի մէջ 33 գլխաւոր հիւպատոսի պաշտօնին նշանակուեցաւ Ռուսաստանի մեծահարուստ Յայերէն՝ Սերկէյ Սարգիսով, որ այս ընթացքին «փայլեցաւ» համայնքային կեանքէն իր ամբողջական բացակայութեամբ: Աւելին, ան ամիսներ շարունակ չէ այցելած հիւպատոսարան, ներկայ չէ եղած իր իսկ հրաւիրած ընդունելութիւններուն: Որոշ տեղեկութիւններու համաձայն ան, զբաղած է իր անձնական գործերով:

Հայաստանի մէջ իրավիճակի փոփոխութեան լոյսին տակ, այս հարցի լուծումը դարձած է հրատապ:

Անկախութեան 25 տարիներու ընթացքին Հայաստանի Արտաքին գործոց նախարարութիւնը կարելի է համարել ամենէն աւելի կայացած գերատեսչութիւնը, ուր կ'աշխատին երկար տարիներու դիւանագիտական փորձ ունեցող քատրային դիւանագետներ: Նախկին իշխանութիւններու օրօք, միշտ չէ որ, ճիշդ ընտրութիւն կատարուած է արտասահմանեան ներկայացուցչութիւններէն ներս առաջին դէմքերու նշանակման հարցով, մասնաւորապէս շարք մը եւրոպական երկիրներու, Ռուսաստանի եւ մասնաւորաբար Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ:

Անցեալին Հայաստանի ընդդիմադրութիւնը միշտ ալ քննադատած էր նախկին իշխանութիւններուն՝ քաղաքական եւ կամ նիւթական նպատակներով դեսպաններ եւ գլխաւոր հիւպատոսներ նշանակելու մէջ:

Հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսած որոշ տեղեկութիւններու համաձայն, Կլէմտէի քաղաքապետ Ջարեհ Սինգանեան կը ձգտի Լուս Անճելըսի գլխաւոր հիւպատոսի պաշտօնին եւ այդ ուղղութեամբ աշխատանք կը տանի՝ իշխանութիւններուն մօտ: Յուսանք այս լուրերը իրականութեան չեն համապատասխանէր, այլապէս նոյն սխալը գործած պիտի ըլլան նոր իշխանութիւնները:

Պր. Սինգանեանի նշանակումը միանշանակ չի կրնար ընդունուիլ համայնքին կողմէ, նկատի ունենալով որ ան իր քաղաքական գործունէութեան ընթացքին հաւասար հեռաւորութեան վրայ չէ գտնուած՝ համայնքի տարբեր կազմակերպութիւններուն եւ խմբաւորումներուն հետ:

Լուս Անճելըսը սփիւռքի ամենէն բազմամարդ հայկական համայնքն է, իսկ հիւպատոսարանը «Հայոց Տունը», ուր բոլորը հանգիստ մուտք եւ ելք պէտք է ունենան:

Յետեւաբար, Լուս Անճելըսը պէտք ունի քատրային դիւանագէտ գլխաւոր հիւպատոսի:

«ՄԱՍԻՍ»

Շքեղօրէն Նշուեցաւ Հնչակեան Քսան Կախաղաններու 103-րդ Ամեակը



Տեսարան մը հանդիսութեան արահէն

Հայ ժողովուրդի ազատագրական պայքարի մեծագոյն իրազրուելիւններէն՝ Հնչակեան քսան հերոսներու նահատակութեան 103րդ տարեդարձը նշուեցաւ Յուլիսի 15-ին, Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ «Կիրակոս» սրահին մէջ:

Արդարեւ Փասատինայի Ս.Գ.Հ.Կ. «Փարամագ» մասնաճիւղի վարչութեան կողմէ կազմակերպուած սոյն միջոցառումը կը հովանաւորէր Արեւմտեան Ամերիկայի վարիչ Մարմինը:

Մեծ թիւով ներկաներուն մէջ էին ԱՄՆ-ի Արեւմտեան Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, նախկին առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփան, ՄԴՀԿ Կեդրոնական վար-

չութեան եւ շրջանիս վարիչ Մարմնի անդամներ, ՌԱԿ-ի Աւերմտեան Ամերիկայի Շրջ. վարչութեան ատենապետ՝ Տօքթ. Ռաֆֆի Պալեան, ՀԲԸՄ-ի եւ Պոլսահայ Միութեան ներկայացուցիչներ, Փասատինայի եւ շրջակայքի Կրթական Համակարգի նախագահ Վրոյր Պուլղուրճեան, ծանօթ պատմաբան փրոֆ. Ռիչըրտ Յովհաննիսեան, ինչպէս նաեւ գաղութի քոյր կազմակերպութեան, մամուլի ներկայացուցիչներ ու ՄԴՀԿ անդամներ եւ համակիրներ:

ԱՄՆ-ի, Հայաստանի եւ ՄԴՀԿ-ի հիմնդրներու յոտնկայս ունկնդրութենէն ետք խօսք առաւ օրուան հանդիսավարուհի եւ Հնչակեան

Շար.ը էջ 5

«Անհրաժեշտ է, Որ Հայաստան Հանդէս Գայ Յստակ Գաղափարներով»- Փոքր Սվիթալսքի

Եւրոմիութիւն-Հայաստան յարաբերութիւններուն նոր որակ հաղորդելու համար անհրաժեշտ է, որ Հայաստանի նոր կառավարութիւնը հանդէս գայ յստակ գաղափարներով ու առաջարկներով, լրագրողներու հետ հանդիպման ժամանակ յայտարարած է Հայաստանի մէջ Եւրոմիութեան պատուիրակութեան ղեկավար, ղեսպան Փիլիթ Սվիթալսքին:

Դեսպանն ընդգծած է, որ Եւրոմիութիւն-Հայաստան յարաբերութիւններու իրաւական ու քաղաքական հենքը համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագիրն է, եւ «Գործընկերութեան առաջնահերթութիւններ» փաստաթուղթը, որոնք բանակցուած են մինչեւ ապրիլեան իրադարձութիւնները:

«Մենք շատ բաց ենք: Եթէ հաջկական կողմը կը կարծէ, որ այս փաստաթղթերը պէտք է հզօրացուին ու նոր որակ ցոյց տան, ապա մեզ պէտք են յստակ գաղափարներ, թէ ճիշդ ինչ կ'ուզէ Հայաստանի կառավարութիւնը փոփոխել մեր քաղաքականութեան մէջ», - յայ-



Եւրոմիութեան ղեսպան Փոքր Սվիթալսքի

տարարած է Սվիթալսքին: Եւ «Մենք լիակատար պատրաստակամութիւն ունինք լսելու, թէ դուք ինչ կ'ուզէք փոխել մեր յարաբերութիւններուն մէջ»:

Անցած շաբաթ առաջին անգամ Եւրոմիութեան մայրաքաղաք Պրիւքսէլ այցելած եւ եւրոպական

Շար.ը էջ 5

«Իրաւապահ Համակարգի Որոշ Օղակներ Սապօթաժի Կ'ենթարկեն Կաշառակերութեան Դէմ Պայքարը»- Փաշինեան

«Ճիշդ չէ մօտեցումը, որ մենք որոշ անձերու մօտ խախտումներ գտնելու խնդիր պէտք է դնենք: Այս մասին ֆէյսպուքի ուղիղ եթերով յայտարարած է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը՝ անդրադառնալով հարցին, թէ իշխանութիւնը երբ պիտի բացայայտէ եւ պատժէ գլխաւոր խախտումներ գործողները:

«Բայց ես ասում եմ, որ մենք ժողովրդից գողացուած իւրաքանչիւր լուծման հետեւից պէտք է գնանք: Իհարկէ, դրանով առաջին հերթին պէտք է զբաղուեն իրաւապահ մարմինները, քանի որ կաշառակերութեան դէմ պայքարը մեզ համար առաջնահերթութիւն է», - ըսած է Փաշինեան:

Ան հետով նկատած է, որ վերջին երկու ամիսներուն, իրաւապահ ոչ բոլոր մարմինները են, որ կաշառակերութեան դէմ պայքարի գործին մէջ անհրաժեշտ չափով արդիւնաւէտ են. «Երբեմն կարող է տպաւորութիւն ստացուել, որ իրաւապահ համակարգի որոշ օղակներ սապօթաժի են ենթարկում կոռուպցիայի դէմ պայքարը: Կոռուպցիայի դէմ պայքարը պէտք է շատ քթիւ շարունակուի Հայաստանի Հանրապետութիւնում, բայց դա պէտք է տեղի ունենայ օրէնքի տարրին համապատասխան՝ մարդու իրաւունքները պաշտպանելով»:

Ան նշած է, որ ինք եղած է քաղաքատարկեալ եւ իրեն համար անձնական խախտութիւն կ'ըլլայ, եթէ ՀՀ-ի մէջ նորէն յայտնուին քաղաքատարկեալներ. «Միւս կողմից նոյնքան անձնական խախտութիւն կը լինի, եթէ կոռուպցիայի դէմ պայքարը չլինի ծայրայեղ արդիւնաւէտ: «Եթէ լինեն իրաւապահ համակարգի այնպիսի օղակներ, որոնք չեն ապացուցի իրենց արդիւնաւէտութիւնը յանուն օրինականութեան, կոռուպցիայի դէմ պայքարում, այդտեղ ես շատ երկար չեմ սպասի եւ կ'իրականացնեմ լրջագոյն քատրային փոփոխութիւններ», - յայտարարած է ՀՀ վարչապետը:

«ՄԱՍԻՍ» ՏԱՐԵԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ

Տարեկան արձակուրդի բերումով «Մասիս» լոյս չի տեսնէր Յուլիսի վերջին շաբաթը եւ Օգոստոսի առաջին շաբաթը: Մեր յառաջիկայ թիւը լոյս պիտի տեսնէ, Շաբաթ, Օգոստոս 11-ին:

Այս ընթացքին կը շարունակէ գործել massispost.com Անգլերէն եւ Յայերէն մեր կայքէջը:

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍՈՒԼ

Ռոբերտ Քոչարեանի Յանցագործութեան Նոր Դրուագ

ՍԱՐԳԻՍ ԱՐԾՐՈՒՆԻ

Եթէ իրադարձութիւններն ընթացան այն ժամանակացոյցով, որ ՀՔԾ-ին խոստացել է Ռոբերտ Քոչարեանի գրասենեակը, երկրորդ նախագահն արդէն յաջորդ շաբաթավերջին ներկայանալու է ՀՔԾ՝ Մարտի 1-ի գործով հարցաքննուելու համար:

Ուշագրաւ է, որ մինչեւ ՀՔԾ ներկայանալը Քոչարեանն արդէն կասկածի տակ է դրել իրաւապահ այս մարմնի գործողութիւնների, Մարտի 1-ի գործի նոր ընթացքի լեգիտիմութիւնը՝ պնդելով, որ քննութեան հիմքում դրուել է, իրենց իսկ խօսքերով, մի քանի շիզոֆրենիկների առաջ քաշած վարկածը: Քոչարեանի թիմի այս պնդումն ակամայից բացայայտում է երկրորդ նախագահի խուճապը, ով գրեթէ վստահ է, որ անառարկելի փաստերի ուժով ինքը շատ արագ յայտնուելու է մեղադրեալի կարգավիճակում: Ոչ պակաս կարեւոր է այն հանգամանքը, որ «մի քանի շիզոֆրենիկի» վերադրուող կարծիքը հանրային կոնսոլիդացում տեսակէտ է. նոյնիսկ ոչ մասնագիտական սոցիոլոգիական հարցումներն արագ կը բացայայտեն, որ մեր հասարակութեան ճնշող մեծամասնութիւնը ոչ միայն Մարտի 1-ի, այլ նաեւ Հոկտեմբերի 27-ի ոճրագործութիւնները կապում է Ռոբերտ Քոչարեանի անուան հետ: Ընդ որում՝ մի յանցագործութիւնից անցել է տաս, միւսից՝ քսան տարի եւ առնուազն տեղին չի լինի խօսել հասարակութեան կոնիւկտուրային, մացոյղիկ դիրքորոշումների մասին: Աւելի շուտ՝ գործ ունենք հանրապետական ձեւաւորումը դիրքորոշման հետ, որի հիմքում ոչ թէ էմոցիոնալ մոտիւլներն են, այլ՝ բաւականին սթափ վերլուծութիւնը: «Առաջին Լրատուականը» բազմաթիւ

կոնկրետ փաստերի, փորձագիտական վերլուծութիւնների հիման վրայ հանդէս է եկել նոյն պնդումներով, ինչի հետեւանքով Ռոբերտ Քոչարեանը մեր դէմ հայց է ներկայացրել դատարան: Այս իրավիճակում համարձակ կարող ենք պնդել, որ մենք օբիեկտիւութեան, հանրային տրամադրութիւնների կրողն ենք, իսկ Ռոբերտ Քոչարեանն իր հայցով փաստորէն մարտահրաւէր է նետել հասարակութեանը:

Ռոբերտ Քոչարեանի թիմը պնդում է, թէ 2008-ին Ռոբերտ Քոչարեանի չէր կարող իշխանութիւն իւրացնել, քանի որ ֆետրուարի 19-ի ընդտրութիւնների արդիւնքները վաւերացուել են Սահմանադրական դատարանի որոշմամբ: Տուեալ դէպքում գործ ունենք համակարգային մանիպուլյացիայի հետ, որովհետեւ ՍԴ լիշատակուող որոշումը կայացրուել է շատ աւելի ուշ՝ արտակարգ դրութեան պայմաններում, երբ արդէն քրէսօլիգարիան հաշուեյարդար էր տեսել հասարակութեան, Լեւոն Տէր-Պետրոսեանի թիմի հետ: Ռոբերտ Քոչարեան-Սերժ Սարգսեան տանդէմը ռեպրեսիաներով, հարիւրաւոր մարդկանց ձեռքակալութիւններով, Հայաստանի տաս քաղաքացու գնդակահարութեամբ նպատակ ունէր կանխորոշել հենց ՍԴ լիշատակուող որոշումը գրեթէ տեղի չունենային Մարտի 1-ի իրադարձութիւններն, ակնյայտ չէ, թէ ինչ որոշում կը կայացնէր ՍԴ-ն: Աւելի շուտ՝ գրեթէ կանխատեսելի է, որ Երեւանի փողոցներում տասնեակ հազարաւոր մարդկանց ներկայութիւնը թոյլ չէր տա, որպէսզի Ռոբերտ Քոչարեանն ու նրա աշխատակազմն աննախադէպ ճնշում բանեցնեն ՍԴ անդամների վրայ:

Իսկ այդ ճնշումները մասին պնդումները հիմնուած են ոչ թէ ենթադրութիւնների, այլ՝ կոնկրետ փաստերի վրայ:

Ըստ վիքիլիքեան գաղտնագերծուած փաստաթղթերի, նման պնդում ԱՄՆ դեսպանատան աշխատակիցների հետ հանդիպմանը արել է ՍԴ նախկին դատաւոր Վալերի Պողոսեանը: Վիքիլիքեան փաստաթղթում մասնաւորապէս նշուած է. «Պողոսեանը անհամբեր էր, որ Ռոբերտ Քոչարեանն է պարտադրել Սահմանադրական դատարանի Մարտի 8-ի որոշումը, որով վճռուեց, որ նախագահի թեկնածու Լեւոն Տէր-Պետրոսեանի բողոքը հիմնազուրկ է»: Պողոսեանը նաեւ ասել էր, թէ իրեն եւս այդ օրերին նախագահի աշխատակազմից են զանգահարել՝ կոնկրետ նշելով Ռոբերտ Քոչարեանի աշխատակազմի ղեկավար Արմէն Գէորգեանի անունը: Հարեւանցիորէն նկատենք, որ Արմէն Գէորգեանն առանցքային դերակատար էր նաեւ Սերժ Սարգսեանի իշխանութեան մէջ, ինչը հիմք է տալիս պնդելու, որ Մարտի 1-ը համակարգաստեղծ յանցագործութիւն է, ինչը կամըջում է երկրի երկրորդ եւ երրորդ նախագահների իշխանութիւնը ու թերեւս այսօր տեղին չէ խօսել Ռոբերտ Քոչարեանի ու Սերժ Սարգսեանի խորքային, անյաղթահարելի հակասութիւնների մասին:

Սակայն վերադառնանք ՍԴ նախկին անդամ Վալերի Պողոսեանի խիստ արժէքաւոր տեղեկութեանը, որը նա փոխանցել է ամերիկացի դիւանագէտներին: Փաստորէն անգամ արտակարգ դրութեան պայմաններում ՍԴ-ն հակուած է եղել չեղարկելու Փետրուարի 19-ի նախագահական ընտրութիւնների արդիւնքները ու Լեւոն Տէր-Պետրոսեանի դիմումը մերժել է միայն Բաղրամեան 26-ին բերտ միջամտութեան հետեւանքով: Ուշագրաւ է նաեւ այն հանգամանքը, որ ՍԴ անդամն այնքան անհամբեր է եղել, որ իր նախաձեռնութեամբ է հանդիպել

ԱՄՆ դեսպանատան աշխատակիցներին ու պատմել եղելով թիւնը՝ թերեւս վախենալով սեփական անվտանգութեան համար:

Յուլիսի 5-ին ՍԴ-ի անդամների նկատմամբ գործադրուած պարբերական ճնշումների մասին խօսել է նաեւ այդ դատարանի մէկ այլ նախկին դատաւոր Կիմ Բալաեանը, ով իր պաշտոնին հրաժեշտ է տուել միայն այս տարեկազմին: Երկար տարիներ սահմանադրական արդարադատութիւն իրականացրած Բալաեանը պնդել է, թէ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարեանը ճնշում է գործադրել նաեւ անձամբ իր նկատմամբ «Միջնորդաւորուած, Հանրապետութեան երկրորդ նախագահի անունից իմ վրայ էլ են փորձել ճնշում գործադրել: Կարող եմ յստակ ասել. ստեղծել էին անկախ յանձնաժողով, որը պէտք է քննարկի, թէ այս մարդը վաղակէտ ազատման իրաւունք ունի, թէ՞ ոչ: Ես դրան կատեգորիկ դէմ էի: Ինձ թւում է, այդ խօսակցութիւնները պարզապէս հասել էին Հանրապետութեան նախագահին, իմ մօտ եկաւ նախագահի օգնականը իրաւական հարցերի գծով եւ ասեց, որ սա պարոն Քոչարեանի միակ խնդրանքն է Ձեզ»:

Կարող ենք պնդել, որ Ռոբերտ Քոչարեանի պաշտօնավարման շրջանում գործել է ռեպրեսիւ մի համակարգ, որը պարբերական ճնշումներ է գործադրել դատական համակարգի, մասնաւորապէս՝ ՍԴ վրայ: Նման բռնապետական միջավայրում են ծնուել ՍԴ որոշումներն, որոնց վկայակոչում են Ռոբերտ Քոչարեանն ու նրա թիմը: Կարծում ենք՝ Մարտի 1-ի գործին զուգահեռ իրաւապահ մարմիններն ունեն բաւարար հիմքեր Ռոբերտ Քոչարեանի ապօրինի գործունէութեան եւս մեկ դրուագով քննութիւն սկսելու համար: «ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Արեւմտեան Մամուլի Արձագանքը՝ «Ժողովրդավարութեան Խաչակիր» Փաշինեանին

ՄԵՏԱՔՍԻԱ ՇԱԼՈՒՆՑ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի՝ Պրիւսել կատարած այցը կրկին առիթ հանդիսացաւ, որ միջազգային մամուլը կրկին ուշադրութեան արժանացնի Հայաստանեան իրադարձութիւնները, նոր կառավարութեան ձեւաւորմանը, Փաշինեանի, այսպէս ասած՝ «Ֆենոմենին»:

ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում Նիկոլ Փաշինեանը Euronews-ին հարցազրոյց է տուել, որում նշել է, որ ՆԱՏՕ-ն պէտք է ուղերձ չի Ատրպէյճանին, որ ԼՂ հիմնահարցում ուժի կիրառումն անթոյլատրելի է: Հարցին՝ Ի՞նչ ծրագրեր ունի Հայաստանի կառավարութիւնը ՆԱՏՕ-ի հետ եւ Ի՞նչ շահեր դուք ունէք ՆԱՏՕ-ի հետ, հարցին, պատասխանել է. «Մենք մասնակցում ենք ՆԱՏՕ-ի երկու առաքելութիւնների՝ մէկը Կոսովոյում, միւսը՝ Աֆղանստանում: Դա մեզ հնարաւորութիւն է տալիս մասնակցելու միջազգային անվտանգութեան ապահովմանը: Բայց մենք նաեւ Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեան անդամ ենք եւ, ընդհանուր առմամբ մենք Հայաստանը տեսնում ենք այս կազմակերպութեան եւ

նրա անվտանգութեան համակարգի մէջ:

Հայաստանը շարունակելու է մնալ Ռուսաստանի հաւատարիմ դաշնակիցը, թէ՛ դուք Ռուսաստանից հեռանալու էք դէպի ՆԱՏՕ, հարցին, նա պատասխանել է, որ կը մնանք Ռուսաստանի մօտ դաշնակիցը եւ յոյս ունենք զարգացնել մեր յարաբերութիւնները Ռուսաստանի հետ, բայց նաեւ ՆԱՏՕ-հետ, արեւմտեան երկրների, Եւրոպական միութեան եւ Միացեալ Նահանգների հետ:

ՆԱՏՕ-ն կը կարողանա՞յ օգնել Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան հարցում: «Այս հակամարտութիւնը պէտք է լուծուի խաղաղ ճանապարհով: Ցաւօք, վարչապետ դառնալու առաջին օրուանից ես տեսնում եմ, որ Ատրպէյճանն ուժեղացնում է թշնամանքը Հայաստանի նկատմամբ: Ես շնորհակալ եմ, որ այժմ մենք տեսնում ենք՝ իրավիճակը փոխուում է, քանի որ ազդեցիկ քաղաքականութիւնը միայն Հայաստանի դէմ չէ. ես կարծում եմ, որ այն նաեւ ժողովրդավարութեան դէմ է, քանի որ այժմ Հայաստանն իսկապէս ժողովրդավար երկիր է: Եւ ես կարծում եմ, որ Ատրպէյճանը վախենում է, որ իր սեփական

ժողովուրդն էլ կարող է ոգեշնչուել հայաստանեան գործընթացներից եւ Ատրպէյճանում սկսել ժողովրդավարական փոփոխութիւններ: Շատ օգտակար կը լինէր, եթէ ՆԱՏՕ-ն կոշտ ուղերձ չէր Ատրպէյճանին առ այն, որ Լեւոնային Ղարաբաղի հակամարտութիւնն ուժով լուծելու ցանկացած փորձ կը հանդիպի միջազգային հանրութեան կոշտ արձագանքին»:

Փաշինեանը վստահեցրել է, որ կարողացել ենք կատարել խոշոր տնտեսական փոփոխութիւններ. «Մենք կարողացել ենք ստեղծել հաւասար պայմաններ տնտեսութեան մէջ բոլոր խաղացողների համար: Մենք յոյս ունենք Հայաստանի տնտեսութիւնն աւելի զարուհի դարձնել օտարերկրեայ ներդրողների համար: Մենք Հայաստանում կը կառուցենք աւելի ամուր Ժողովրդավարութիւն, որպէսզի օգնենք կամ չխանգարենք մեր միջազգային գործընկերներին»:

Ամերիկեան հեղինակաւոր TIME ամսագիրը «Ժողովրդավարութեան երազանքը ողջ պահող 4 խաչակիրները» յօդուածում անդրադարձել է Նիկոլ Փաշինեանին: «Այսօր աշխարհում ամեն երրոր-

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՍԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱԴԵԱՏԱՊԱՐԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երկար Խզում է Ետք Յանդիպած ԵՆ Նիկոլ Փաշինեանն ու Լեւոն Տէր-Պետրոսեանը

Կառավարական առանձնատան մէջ, Յունիսի 16-ին տեղի ունեցած է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի հանդիպումը:

Ըստ կառավարութեան ֆէյսպուքեան էջին, առաջին նախագահն իր տեսակէտները յայտնած է Հայաստանի առջեւ ծառայած շարք մը մարտահրաշխանութիւններու յաղթահարման ուղիներու վերաբերեալ: Քննարկուած են արտաքին քաղաքականութեանն ու արցախեան հիմնարկներին վերաբերող հարցեր: Ըստ պաշտօնական հաղորդագրութեան՝ հանդիպումը տեղի ունեցած է Լեւոն Տէր-Պետրոսեանի նախաձեռնութեամբ:

Քաղաքական մեկնաբան Յակոբ Պատալեանի կարծիքով՝ երկկողմ լուծութիւնը թերեւս կը նշանակէ, որ որեւէ հարցի շուրջ համաձայնութիւն ձեռք չէ բերուած: Պատալեանն ընդգծած է՝ լրացուցիչ մեկնաբանութիւնն անհրաժեշտ է աւելորդ ենթադրութիւններէն զերծ մնալու համար:

Պատալեանն ուշադրութիւն դարձուցած է նաեւ այն հանգամանքին, որ հանդիպումը տեղի ունեցած է առաջին նախագահի նախաձեռնութեամբ: Յիշեցնելով, որ թաւաշէջ յեղափոխութենէն ետք Լեւոն Տէր-Պետրոսեանը փոքր յօդուածներով անդրադարձած է իրավիճակին եւ հաղորդումներ փոխանցած Փաշինեանին, քաղաքական մեկնաբանը եզրահանգած է՝ թերեւս առաջին նախագահը կը կարծէ, որ անոնք պատշաճ արձագանգի չեն արժանացած եւ դէ-

մառդէմ հանդիպման անհրաժեշտութիւն տեսած է:

Հարցին՝ արդեօք իրավիճակն այսօր ԼՂ-ի մէջ այնպիսին է, որ առաջին նախագահը հրատապ հանդիպման անհրաժեշտութիւն տեսած է, Պատալեանը պատասխանած է, թէ Լեւոն Տէր-Պետրոսեանը դեռ 2008-էն հարցը հրատապ կը համարէ, սակայն սա դեռ չի նշանակեր, որ իրականութեան մէջ հրատապութեան հարց կայ: Առաջին նախագահի գլխաւորած Հայ Ազգային Գոնկրէսն ու Հայաստանի Ժողովրդական կուսակցութիւնները անցած տարի կայացած խորհրդարանական ընտրութիւններուն հանդէս եկան «Խաղաղութիւն, հաշտութիւն, բարիդրացիութիւն» կարգախօսով՝ առաջարկելով Հայաստանի բոլոր հարեւաններուն հետ հաշտութեան հասնիլ:

Քաղաքական մեկնաբանը, այս առնչութեամբ, նշած է. - «Արցախի խնդրում նոր իշխանութեան ռազմավարական հայեցակարգի բացակայութիւնը խնդիր է, իհարկէ, Հայաստանի համար: Միեւնոյն ժամանակ, Նիկոլ Փաշինեանն ինքը, անմիջապէս վարչապետ ընտրուելուց յետոյ Արցախում նաեւ արեւ շատ պատասխանատու, շատ յստակ յայտարարութիւններ եւ նուազագոյն անհրաժեշտութեան չափով ողջունելի, եւ ինքը պէտք է քաղաքական պատասխանատուութիւն կրի իր իսկ խօսքերի համար: Այսինքն, դրանցից շեղուելը կը նշանակի իսկապէս շատ վտանգալուր երկդիմութիւն: Ես կարծում եմ՝ Նիկոլ Փաշինեանը չպէտք է դա թոյլ տայ»:

Վայոց Ձորի Մէջ Վեհափառի Տեղաշարժն Արգելափակելու Փաստով Ոստիկանութիւնը Նիւթեր Կը Նախապատրաստէ

Քննչական կոմիտէի վայոց Ձորի քննչական բաժնին մէջ նիւթեր կը նախապատրաստուին 14 յուլիսին Գնդեվանքի տարածքին Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին երկրորդի տեղաշարժն արգելափակելու դէպքի վերաբերեալ:

Քննչական կոմիտէն իր հաղորդագրութեան մէջ նշած է. - «Մայր Աթոռի տեղեկատուական համակարգի ֆէյսպուքեան էջում 2018 թուականի յուլիսի 14-ին՝ ժամը 18:46-ին, «Շտապ» խորագրի ներքոյ հրապարակուել էր տեղեկատուութիւն առ այն, որ «Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսը ուխտի էր մեկնել Գնդեվանք (Վայոց Ձորի թեմ), որտեղ յայտնի նախաձեռնութեան անդամներն արգելափակել են Վեհափառ Հայրապետի տեղաշարժը: Այժմ Նորին Սրբութեան մեքենան շրջափակուած է, Գնդեվանքից վերադարձի ճանապարհը փակ է մեքենաներով

եւ քարերով, նախաձեռնութեան անդամները սպառնալիքներ են հնչեցնում: Հայաստանեաց Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգեւոր պետին վտանգ է սպառնում»:

Նշուած հրապարակման առնչութեամբ ՀՀ քննչական կոմիտէի վայոց Ձորի մարզային վարչութեան մէջ կը նախապատրաստուին նիւթեր, որու շրջածիրէն ներս քննութեան առարկայ դարձած են դէպքի վերաբերեալ համացանցի մէջ առկայ տեսանիւթերը: «Յանձնարարութիւններ են տրուել ոստիկանութեան համապատասխան աշխատակիցներին՝ միջոցներ ձեռնարկել՝ դէպքի բոլոր մասնակիցներին ինքնութիւնը պարզելու եւ վարոյթն իրականացնող մարմնին ներկայացնելու, գործի համար կարեւոր նշանակութիւն ունեցող մի շարք այլ հանգամանքները պարզելու ուղղութեամբ», - նշուած է հաղորդագրութեան մէջ:

Վարչապետը Յոյսով է, որ Ամուլսարի Հարցին Լուծումը կը Գտնուի

Ֆէյսպուքի օգտատէրերէն մէկուն հարցին ի պատասխան, վարչապետ Նիկոլ Փաշինեանը 15 յուլիսի երեկոեան ուղղիչ ելոյթին յայտարարած է, որ կառավարութիւնը չի կրնար փակել Ամուլսարի հանքը, թէ՛ համապատասխան իրաւական հիմնաւորումներ չըլլան:

Վարչապետը միաժամանակ յի-

շեցուցած է, որ բնապահպանական տեսչութիւնը ստուգումներ սկսած է Ամուլսարի մէջ, իշխանութիւնները կը քննեն ստեղծուած իրավիճակը, մինչդեռ բնապահպանները բողոքի ցոյցերով կը պահանջեն չհաճագործել հանքը - «Մեր չեցուցած է, որ բնապահպանական տեսչութիւնը ստուգումներ սկսած է Ամուլսարի մէջ, իշխանութիւնները կը քննեն ստեղծուած իրավիճակը, մինչդեռ բնապահպանները բողոքի ցոյցերով կը պահանջեն չհաճագործել հանքը - «Մեր

Շար.ը էջ 5

Կարգալոյծ Հռչակուած է Կորիւն Արեղայ Առաքելեանը



Կարգալոյծ հռչակուած Կորիւն արեղայ Առաքելեան

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսի հայրապետական տնօրինութեամբ կարգալոյծ հռչակուած է Կորիւն արեղայ Առաքելեանը՝ եկեղեցականին անյարիր վարքագիծի ու հակակառնական ընթացքի համար:

Տնօրինութեան համար հիմք ծառայած է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Կարգապահական յանձնախումբի եզրակացութիւնը, ինչպէս նաեւ սահմանուած մէկշաբաթեայ շրջանին զղջմամբ ու ապաշխարութեամբ դարձի գալու յորդորի անտեսումը:

Կարգալոյծ եկեղեցականն այսուհետ պիտի դասուի աշխարհականներու շարքին՝ Արմէն Առաքելեան աւագանի անունով:

Յիշեցնենք, որ յայտնի նախաձեռնութեան մէջ ընդգրկուած Կորիւն արեղայի եւ խումբ մը աշխարհականներու պահուածքի եւ գործողութիւններու առնչութեամբ անցնող շաբաթներու ընթացքին

իրենց անհանգստութեան եւ դատապարտութեան խօսքը հնչեցուցած էին եպիսկոպոսոսաց դասը, բազմաթիւ եկեղեցականներ եւ հաւատացեալներ ինչպէս Հայաստանէն, այնպէս եւ Սփիւռքէն:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանները 6 Յունիս, 2018 թուականի խնդրագրով դիմած էին Վեհափառ Հայրապետին կարգազանց հոգեւորականին պատասխանատուութեան ենթարկելու խիստ միջոցներու ձեռնարկման վերաբերեալ:

10 Յունիսին Գերագոյն հոգեւոր խորհուրդի Ժողովին որոշում կայացուած էր Նորին Սրբութեան յորդորով մէկշաբաթեայ վերջնաժամկէտ սահմանել, որպէսզի անդրադարձումի եւս մէկ առիթ ընծայուի նախաձեռնութեան անդամներուն՝ դադարեցնելու հակակառնական իրենց գործողութիւնները եւ վերադառնալու Սուրբ Էջմիածնի խնամակալ հովանիի ներքոյ:

Աննա Յակոբեանը Յայտարարեց «Իմ Քայլը» Հիմնադրամի Գործունէութեան Մեկնարկը

Վարչապետ Նիկոլ Փաշինեանի տիկնոջ՝ Աննա Յակոբեանի կողմէն հիմնադրուած «Իմ քայլը» հիմնադրամի գործունէութեան մեկնարկը տրուած է Յունիս 12-ի երեկոյեան:

Հիմնադրամը, ըստ Աննա Յակոբեանի, պիտի դառնայ հարթակ բոլոր այն կարեւոր խնդիրներու լուծման համար, որոնք մինչ այս լիարժէք լուծում չեն ստացած:

«Մենք փորձելու ենք համատեղ ուժերով կառուցել բոլոր առումներով առողջ եւ ներուական հասարակութիւն, որտեղ ոչ ոք անտեսուած չի լինի եւ բոլորը կ'ունենան հաւասար հնարաւորութիւններ: Տարբեր մարդկանց հետ քննարկումները արդիւնքում ուրուագծուեց մեր գործունէութեան շրջանակը, այն է՝ մշակոյթ, կրթութիւն, առողջապահութիւն, սոցիալական ապահովութիւն: Հիմնադրամն այս բոլոր խնդիրներին հասցեագրելու համար գործելու է երեք ձեւաչափով. առաջին՝ մենք կամուրջ ենք լինելու հրաշալի գործեր կատարող անձանց եւ այդ հրաշալի գործերը ֆինանսաւորելու պատրաստ անձանց միջեւ, երկրորդ՝ մենք հովանաւորելու ենք արդէն իսկ գոյութիւն ունեցող նախագծերը կամ նրանք, ովքեր կառավարուեան, եթէ դրանք համապատասխան են արդէն ընդունուած եւ յայտարարուած չափանիշներին, եւ երրորդ՝ մենք կ'ունենանք մեր 2-3 նախագիծը, որն



Վարչապետ Նիկոլ Փաշինեանի տիկնոջ՝ Աննա Յակոբեան

ինքներս կը մշակենք ու կ'իրականացնենք», - ըսած է Յակոբեանը: Վարչապետի տիկնոջ ըսած է՝ յոյս ունի, որ արդէն հոկտեմբերէն առաջին ծրագիրները կ'իրականացուին: Ան ընդգծած է՝ հիմնադրամը պիտի գործէ թափանցիկ եւ հաշուետու պիտի ըլլայ իւրաքանչիւր ծախսուած դրամի համար:

«Խոստանում եմ, որ վարչապետի տիկնոջ կարգավիճակում իմ բոլոր քայլերը կը լինեն բաց եւ տեսանելի բոլորի համար, եւ ես ամէն ինչ կ'անեմ յստակ եւ շօշափելի արդիւնքներ գրանցելու համար: Յանուն Հայաստանի եւ Արցախի, դրանք քաղաքացիներին, սփիւռքի մեր հայրենակիցներին եւ ամենաբարձր եւ վեհ գաղափարներին», - ըսած է Յակոբեանը:

ԼՈՒՐԵՐ

Փաշինեան. «Ատրպէյճանի Թշնամանքը Ոչ Միայն Հայաստանի, Այլ Եւ Տարածաշրջանին Մէջ Ժողովրդավարութեան Դէմ է»



Նիկոլ Փաշինեան եւ Գերմանիոյ վարչապետուհի Անկէլա Մերքըլ ՆԱԹՕ-ի ժողովի ընթացքին

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը պրիւքսէլեան այցի շրջածրին ներս երէկ ելոյթ ունեցած է ՆԱԹՕ-ի կեդրոնակայանին մէջ՝ Աֆղանիստանի մէջ «Վճռական աջակցութիւն» առաքելութեան մասնակցող ՆԱԹՕ-ի անդամ եւ գործընկեր երկիրներու ղեկավարներու հանդիպման, ունեցած է շարք մը երկկողմ հանդիպումներ:

Նշենք, որ Հայաստանը կը մասնակցի Աֆղանիստանի մէջ խաղաղապահ գործողութիւններուն: Դեռ նախորդ կառավարութեան ժամանակ խօսակցութիւններ կային, թէ Հայաստանը կը պատրաստուի աւելցնել իր զինուորներու թուաքանակը Աֆղանիստանի մէջ: Առայժմ մենք որեւէ տեղեկութիւն չունինք, թէ ինչ կը մտածէ այդ ուղղութեամբ այս կառավարութիւնը:

Ամենահետաքրքիր իրադարձութիւնն այս օրերուն թերեւս այն էր, որ Լաթիփաչի նախագահ Ռայմոնտս Վեյտնիսի հետ հանդիպումէն ետք կայացած կարճատեւ մամուլի ասուլիսի ժամանակ Նիկոլ Փաշինեանը խօսած է Ատրպէյճանի թշնամական վարքագիծի մասին՝ ըսելով. - «Մեր մարտահրաշխանութիւնը է Ատրպէյճանի ոչ-կառուցողական քաղաքականութիւնը: Յաւօք սրտի, Հայաստանում ժողովրդավարութեան առաջխաղացման եւ Հայաստանում ժողովրդական լեզուափոխութիւնից յետոյ Ատրպէյճանը աւելի ակրեսիւ դարձաւ, եւ այս ակրեսիւնն միայն Հայաստանի դէմ չի ուղղուած: Դա նաեւ ակրեսիւն է մեր տարածաշրջանում ժողովրդավարութեան դէմ»:

Ղովրդավարութեան դէմ»:

Ան նաեւ նշած է, որ կ'ակնկալէ կառուցողական քննարկումներ եւ զրոյցներ՝ անվտանգութեան օրակարգի շուրջ:

Լաթիփաչի նախագահ Ռայմոնտս Վեյտնիսի հետ հանդիպման ժամանակ Նիկոլ Փաշինեանը մասնաւորապէս ըսած է. - «Յաւօք սրտի, վարչապետի պաշտօնը ստանձնելու առաջին իսկ օրերից ես տեսնում էի լարուածութեան աճ Լեռնային Ղարաբաղի հետ սահմանին, ինչպէս նաեւ հայ-ատրպէյճանական սահմանի երկայնքով»:

«Ես կը ցանկանայի շեշտել, որ ատրպէյճանական ցանկացած յարձակում Հայաստանի դէմ ոչ միայն յարձակում է Հայաստանի դէմ, այլ նաեւ յարձակում է ժողովրդավարութեան դէմ: Ես կարծում եմ, որ Ատրպէյճանի նախագահը որոշակի մտահոգութիւններ ունի, որ ժողովրդավարական գործընթացները կարող են Հայաստանից տարածուել դէպի Ատրպէյճան, եւ որքան հասկանում եմ՝ նրանք փորձում են աճեցնել լարուածութիւնը, որպէսզի կանխեն ժողովրդավարական այլքի տեղաշարժը Հայաստանից Ատրպէյճան», - շեշտած է Հայաստանի վարչապետը: - «Եւ ես յոյս ունեմ, որ միջազգային հանրութիւնը շատ ուժեղ ազդակ կը չլի Պաքուին, որ մեր տարածաշրջանում իրավիճակը սրելու ցանկացած փորձ, պատերազմ սկսելու ցանկացած փորձ ուժեղ հակադեցութեան կ'արժանանայ միջազգային հանրութեան կողմից»:

Մաքրոնն ու Փաշինեանը Քննարկած Են Երկկողմ Յարաբերութիւններ Եւ Ղարաբաղեան Հարցը

Պրիւքսէլի մէջ գտնուող վարչապետ Նիկոլ Փաշինեանը ՆԱԹՕ-ի կեդրոնակայանէն ներս հանդիպում ունեցած է Ֆրանսայի Հանրապետութեան նախագահ էմանուէլ Մաքրոնի հետ:

Նիկոլ Փաշինեանն ընդգծած է, որ Հայաստանը մեծապէս կը գնահատէ Ֆրանսայի հետ ձեւաւորուած առանձնաշնորհեալ յարաբերութիւնները՝ հիմնուած երկու ժողովուրդներու աւանդական բարեկամութեան եւ փոխադարձ յարգանքի վրայ:

«Մեզ համար մեծ պատիւ է հիւրընկալել Ֆրանսոֆոնիայի միջազգային կազմակերպութեան 17-րդ զագաթնաժողովը: Յանձնառու

ենք այն ամենաբարձր մակարդակով կազմակերպելուն:

Էմանուէլ Մաքրոնը շնորհաւորած է Նիկոլ Փաշինեանը ՀՀ վարչապետի պաշտօնին ընտրուելու կապակցութեամբ եւ կարեւորած Հայաստանի մէջ տեղի ունեցած իրադարձութիւններու խաղաղ, ժողովրդավարական ճանապարհով հանգուցալուծումը:

Էմանուէլ Մաքրոնը վստահութիւն յայտնած է, որ Ֆրանսոֆոնիայի զագաթնաժողովը Երեւանի մէջ պիտի իրականացուի բարձր մակարդակով եւ յոյս յայտնած է, որ Հայաստան կատարելիք այցի ընթացքին հնարաւորութիւն պիտի ըլլայ առաւել առարկայա-

Պետրոս Թերզեան Նշանակուած Է «Հայաստան» Հիմնադրամի Ժամանակաւոր Վարիչ Տնօրէն

Հայաստանի նախագահ, «Հայաստան» համահայկական հիմնադրամի Հոգաբարձուներու խորհուրդի նախագահ Արմէն Սարգսեանը Յուլիսի 10-ն նամակով դիմած է Հոգաբարձուներու խորհուրդի անդամներուն՝ առաջարկելով ընդունիլ Հիմնադրամի գործադիր տնօրէն Արա Վարդանեանի հրաժարականի դիմումը, որ վերջինս նախագահին ներկայացուցած էր նախորդ օրը:

Միեւնոյն ժամանակ, հանրապետութեան նախագահն առաջարկած է «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր վարչութեան ղեկավարումը ժամանակաւորապէս դնել Հոգաբարձուներու խորհուրդի անդամ, Ֆրանսայի տեղական մարմնի ատենապետ Պետրոս Թերզեանի վրայ, այնուհետեւ յայտարարել բաց մրցույթ՝ Հիմնադրամի գործադիր տնօրէնի թափուր պաշտօնի համար:

Ատրպէյճանի Քայլերէն Ակնյայտ Կ'երելի որ Անոնք Ռազմական Գործողութիւններու կը Նախապատրաստուին. Տիգրան Աբրահամեան

Վերջին մէկ շաբթուան համեմատ առաջնագիծին լարուածութիւնը նուազած է:

Այս մասին «Արմէնիքս»-ի թղթակցին հետ զրոյցի ժամանակ նշած է Արցախի նախագահի անվտանգութեան հարցերով խորհրդական Տիգրան Աբրահամեանը: Սակայն, Աբրահամեանի խօսքով՝ իրավիճակը արագ կրնայ փոխուիլ:

«Մի քանի ժամուայ ընթացքում կարող է կտրուկ իրավիճակը փոխուել ու սրուել: Այս պահին կարող ենք արձանագրել, որ նախորդ շաբթիւների համեմատ լարուածութիւնը բաւական նուազել է», - ըսած է Տիգրան Աբրահամեանը:

«Արմէնիքս»-ի փոխանցմամբ, նախագահի խորհրդականի խօսքով՝ Ատրպէյճանի քայլերէն ակնյայտ կ'երեւի, որ անոնք ռազմական գործողութիւններու կը նախապատրաստուին:

«Կարծում եմ, այն իրավիճակը, որ մենք ունենք, այն կլուպալ գործընթացները, որոնք ընթանում են քաղաքական հարթութիւնում, ռազմական, քարոզչական, ինչու չէ, նաեւ տնտեսական հարթութիւնում, ի ցոյց են դնում Ատրպէյճանի ռազմատենչ նպատակները: Դրանք կը լինեն տասն օր յետոյ, մէկ ամիս, թէ մէկ տարի յետոյ, առայժմ պարզ չէ, բայց այն, որ Ատրպէյճանը պատրաստուած է ռազմական գործողութիւնների՝ ակնյայտ է», - ըսած է Աբրահամեանը:

Տիգրան Աբրահամեանը դիտարկած է նաեւ քննարկուող վար-



Արցախի Գախազահի անվտանգութեան հարցերով խորհրդական Տիգրան Աբրահամեան

կածներէն այն, որ Ատրպէյճանը կրնայ ռազմական գործողութիւններ սկսիլ ֆուլթայլի աշխարհի առաջնութեան աւարտէն ետք, բայց նշած է, որ պատերազմի վերսկսման այսպիսի վարկածները շատ են:

«Մարդկանց մի խումբ կայ, որ համարում են, թէ ֆուլթայլի աշխարհի առաջնութիւնն էր, որ կանգնեցրել էր Ատրպէյճանին, որովհետեւ այն անցկացուած էր Ռուսաստանի Դաշնութիւնում, իսկ Ռուսաստանի ազդեցութիւնն ու առաջնութեան նշանակութիւնը ատրպէյճանական կողմը չէր կարող հաշուի չառնել», - նշած է նախագահի խորհրդականը:

Երտողան. «Երբեք Ատրպէյճանին Առանձին Չենք Ձգեր»

Թուրքիոյ նախագահ Ռեճէպ Թայիպ Էրտողան Հիւսիսային Կիպրոսի թրքական ինքնահռչակ հանրապետութենէն վերադառնալու ժամանակ պատասխանած է լրագրողներու հարցերուն: Էրտողանը Թուրքիոյ համար օրակարգային հարցերու շարքին անդրադարձած է նաեւ դարաբաղեան հակամարտութեան:

«Էրմենիհայեր»-ի փոխանցմամբ, ան նշած է, որ մինչեւ այժմ միջազգային հարթակներու վրայ Թուրքիան միշտ աջակցութիւն ցուցաբերած է Ատրպէյճանին, եւ այդ մէկը պիտի շարունակուի նաեւ ապագային:

«Ղարաբաղի հարցի վերաբերեալ մենք ի սկզբանէ միշտ աջակցած ենք, կ'աջակցինք եւ պիտի շարունակենք աջակցիլ Ատր-

պէյճանին: Այս հարցին մէջ կայ Յ պատասխանատու երկիր՝ ԱՄՆ, Ռուսաստան եւ Ֆրանսա: Յաւօք, անոնք այդ ուղղութեամբ անհրաժեշտ քայլեր չեն կրնար կամ չեն ընէր: Եւ, ցաւօք, ատոր համար ալ այդ հակամարտութիւնը կը շարունակուի եւ լուծում չի ստանար», - ըսած է Էրտողան:

Վերջինս նշած է, որ իրենք բոլոր միջազգային հարթակներուն վրայ՝ ըլլալ ՆԱԹՕ, թէ այլ հարթակ, Ղարաբաղի հարցի վերաբերեալ պիտի շարունակեն աջակցիլ Ատրպէյճանին:

«Այս հարցի վերաբերեալ մենք երբեք անոնց (Ատրպէյճանին-իմբ.) առանձին չենք ձգած եւ չենք ձգեր», - եզրափակած է Թուրքիոյ նախագահը:

կան քննարկել հայ-ֆրանսական կապերու հետագայ խորացմանն ու

ամրապնդմանն ուղղուած հարցերն ու նախագիծերը:

Շրեղօրէն Նշուեցաւ Զնչակեան Քսան Կախաղաններու 103-րդ Ամեակը


Շարունակուած էջ 1-էն

Քսան Յեղափոխականներու շառաւիղէն՝ Տիկ. Թագուհի Արզումանեան: Ան ոգեւորիչ ելոյթով մը պանծացուց յիշատակը մեր հերոսներուն, որոնք վառ օրինակներ են իսկական հայրենասիրութեան: «Այսօր ոչ միայն մենք այլ ամբողջ աշխարհը կ'ոգեկոչէ անոնց անմար յիշատակը», ըսաւ ան:

Իր բացման խօսքին մէջ ՄԴՀԿ «Փարամազ» մասնաճիւղի վարչութեան անունով ատենապետ ընկ. Տիրան Ճէրէճեան ողջունեց ներկայ

Նոր Սերունդ Մշակութային Միութեան հեգաճկուն պարուհիներու ելոյթէն ետք, անգլերէն լեզուով ելոյթ ունեցաւ երիտասարդ իրաւաբան Վահան Խոտանեան: Ան առաւելաբար շեշտը դրաւ նահատակներու պատգամին վրայ, որ է յարատեւ պայքարի շարունակութեան անհրաժեշտութիւնը, հայ ժողովուրդի գերագոյն իղձերու իրականացման համար:

Շնորհալի երգիչ Յարութ Յակոբեան միջնորդութեամբ խանդավառեց օրուան պատշաճ երգերով («Ողջոյն քեզ Հնչակ», «Ատանա»,



հիւր անձնաւորութիւններն ու հասարակութիւնը: Այնուհետեւ ի մէջ աչոյց ըսաւ. «Այսօր պարծանքի եւ ինքնագնահատման օր է: Հզօր եւ անհամար եղած է այն հայ դեկավարներու թիւը, որոնք քաջաբար կռուեցան բանթուրանիքի վտանգին դէմ, որուն նպատակն էր ոչնչացնել մեր ծրագիրները: 1913ի Հնչակեան կուսակցութեան Դրդ համագումարի նպատակն էր անողոք պայքար մղել իթթիհատականներուն դէմ: Քսաններու նահատակութենէն ետք հայ ժողովուրդի քաջարի ազատամարտիկները, տարբեր դրօշներու ներքեւ կերտեցին Սարգարապատի յաղթանակը: Անոնք բովանդակ հայութեան պարծանքն են, որոնք կերտեցին նաեւ Արցախը»:

Շնորհալի ասմունքող Թագուհի Արզումանեան աչունհետեւ «Իմ Հայրանունը» կոչուող ինքնագիր հոյակապ քերթուածով մը, հայրենասիրական ոգիով լեցուց բոլորի սրտերը, արժանանալով երկարատեւ բուռն ծափահարութիւններու:

եւ «Անդրանիկ Փաշա»): Օրուան գլխաւոր բանախօսն էր ՄԴՀԿ Կեդրոնական վարչութեան անդամ ընկ. Կիրակոս Թիւթիւնճեան, (յատկապէս ժամանած դարձաւ իթթիհատ կուսակցութեան դաւադրութեան մասին, յատկապէս Ատանայի հայաջինջ ջարդի եւ ապա Հնչակեան կուսակցութեան Քիչօսթիճէի համագումարի որոշումին շուրջ: Արդարեւ այդ ժողովին մէջ որոշուած էր բնաջնջել համաթուրանական ծրագիրներով մէջտեղ եկած սուլթանական թուրքիոյ իթթիհատ կուսակցութեան դեկավարները: Այդ որոշումին արդիւնքն էր քսաններու նահատակութիւնը, որոնք պատասխանատու նկատուած էին կազմակերպութեամբ ահաբեկչութեան: Բայց սուլթան Պաշազիտի հրապարակին վրայ կախաղան բարձրացուած քսաններէն Տօքթ. Պէննէ կը յարէր. «Դուք մեզ քսաններս կը կախէք բայց վաղը քսան հազարներ մեր վրէժը պիտի լուծեն»:

Յարգելի բանախօս ընկերը

Զանդէս Գալ Յստակ Գաղափարներով

Շարունակուած էջ 1-էն

կառուցներու ու պետութիւններու դեկավարներուն հանդիպած էր վարչապետ Նիկոլ Փաշինեանը: Պրիւքսէլեան այցի աւարտին Փաշինեանը յայտարարած էր, որ Եւրոմիութենէն դեռ միայն ողջունող յայտարարութիւններ կը լսուին, սակայն քաղաքականութեան մէջ առայժմ որեւէ շօշափելի փոփոխութիւն չկայ: - «Եւրոմիութեան քաղաքականութիւնը նոյնն է ինչ չորս ամիս առաջ: Կը կարծենք, որ կ'ա՛մ պէտք է այդ յայտարարութիւններու ոգեւորուած թոնայնութիւնը իջեցնել, կ'ա՛մ քաղաքականութիւնը հակամտօնէն փոխել», - նշած էր վարչապետը: Հայաստանի մէջ Եւրոմիութեան դեսպանէն խնդրած են

արձագանգել Փաշինեանի այս յայտարարութեան: «Հայկական կողմէն մենք կը լսենք, որ Եւրոմիութեան ուղղութեամբ Հայաստանի քաղաքականութեան մէջ փոփոխութիւն չկայ: Դուք հիմա կ'ըսէք, որ Եւրոմիութեան վերաբերեալ Հայաստանի քաղաքականութեան անփոփոխ մնալը պէտք է յանգեցնէ Հայաստանի վերաբերեալ Եւրոմիութեան քաղաքականութեան փոփոխութեան: Կրնա՞ք բացատրել ինչպէս հնարաւոր է համատեղել այս երկուքը», - կատակած է Փիլիպ Սփիթալաքի՝ շարունակելով. - «Իսկ, եթէ ան լուրջ, ապա մեզ անհրաժեշտ են յստակ գաղափարներ, յստակ ակնկալիքներ, եւ մենք պատրաստ ենք քննարկել»:



անդրադարձաւ Մեծ Եղեռնէն ետք հայութեան ազատագրական պայքարի իբր արդիւնք նորանկախ Հայաստանի գոյառումին: Այսօր մեր հայրենիքը ՄԱԿ-ի եւ Միջազգային կառույցներու անդամ է: Այսուհանդերձ ունինք մեր ներքին եւ սփիւռք մտահոգող տագնապներն ու հարցերը: Հարկ է որ ոյժ տանք մեր միասնութեան եւ զօրավիգ կանգնինք հայակերտումի ջանքերուն եւ հայրենիքի բարգաւաճման գործընթացին: «Հնչակեան կուսակցութիւնը հայապահպանութեան անփոխարինելի օճախը համարելով Հայաստանը, անխախտ հաւատարմութեամբ կանգնած է հայրենի պետութեան կողքին: Մենք անոր մէջ կը տեսնենք Արցախի միջազգային ճանաչումը ինչպէս նաեւ մեր պահանջատիրական պայքարի յաղթանակը:

«Ապրիլ-Մայիս ամիսներուն հայրենիքի հորիզոնին վրայ ծնաւ մեր համոզումներուն հարազատ ժողովրդային արդար շարժումը: Թաւշեայ յեղափոխութիւնը տուաւ մեր հետապնդած հայրենիքին ազդանշանը:

-Անգամ մը եւս մեր զօրակցութիւնը կը յայտնենք վերահաստատելու վարչապետ Նիկոլ Փաշինեանին հայրենակերտումի յանդուգն ճիգերուն: Պիտի շարունակենք հայրենիքի մէջ բոցն դրած խորթ երեւոյթներուն դէմ մեր կառուցողական ընդդիմութիւնը:

«Ազատ, գերիշխան ու անկախ հայրենիքի տեսլականը համոզում է մեզ համար եւ ոչ կարգախօս:

«Պիտի գալ ճանաչումի եւ հաշուետուութեան ու հատուցման օրը, այժման ատեն որ մեր ժողովուրդը կը ծնի Փարամազներ, Տօքթ. Պէննէներ, Վանիկներ, կը ծնի Եւրաբլուրի մէջ ննջող նահատակներ», իր խօսքի ընթացքին ըսաւ ընկ. Թիւթիւնճեանը:

Այնուհետեւ խօսք առաւ Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան

Արք. Տէրտէրեան եւ դրուատեց քսաններու հերոսական կեանքի տեսլականը: «Մենք եւս վերաբրժեւորեցնենք մեր կեանքը: Միասնաբար հարց տանք թէ ինչպէս մեր պատգամները փոխանցենք մեր երիտասարդ սերունդին: Անոնք հպարտութեամբ պէտք է ապրին մեր հայրենիքի ցաւերն ու ուրախութիւնները: «Քսանները կախաղան բարձրացան տեսնելու համար այսօրուան պայծառ Հայաստանը: Այս օրերուն կ'ապրինք դժուարին օրեր: Երիտասարդները հեռու կը մնան եկեղեցիէն ու հայրենիքէն: Համախմբենք մեր ոյժերը, հետեւինք քսաններու պատգամին, որպէսզի անոնց յիշատակն անմահ մնայ»:

Օրուան գեղարուեստական բաժնին իրենց մասնակցութիւնը բերին նաեւ շնորհալի երգիչներ՝ Արաքսիա Ամիրխանեան («Հայ Քաջեր», «Պատերազմի էք գնբում») եւ Արնօ Մկրտիչեան («Պիտի գնանք վաղ թէ ուշ», «Տուր Ձեռքդ Ընկեր», «Հնչակեան ենք Մենք»): Վերջին գոյգ գերգերուն ժողովուրդն ալ իր մասնակցութիւնը բերաւ այս հոգեյոյզ կատարումին, բարձրացնելով բոլորին տրամադրութիւնները:

Սրահի մուտքին յատուկ եռօտանիներու վրայ գետեղուած էին Հնչակեան քսան ռահվիրաներու դիմանկարները իրենց հակիրճ կենսագրականներով: Իսկ գլխաւոր բեմը գեղարուեստական գեղեցիկ յարդարանքով կը պատկերացնէր քսան տիտանները՝ որոնց վրայ կ'երեւէր օրուան նշանաբանը՝ հետեւեալ վերտառութեամբ. «Մեր Յստակ Տեսլականը՝ Ժողովրդավարական եւ Անկախ Հայաստան»: Այս բոլորը պատրաստուած էին արուեստագէտ՝ Մանուկ Սաղամեանի կողմէ:

Կը գնահատենք նախաձեռնող «Փարամազ» մասնաճիւղը իր այս բարձրորակ եւ յիշարժան միջոցառումին համար:

Գ.Մ.

Վարչապետը Յոյսով է

Շարունակուած էջ 3-էն

կառավարութիւնը կոնկրետ ժառանգել է իրավիճակ, երբ որ միջազգային պորտալում (սակարան) ներկայացուած ընկերութիւնը իրականացրել է մօտաւորապէս 400 միլիոն տոլարի, իրենց պնդմամբ, ներդրում: «Լիտիան Արմէնիա» ընկերութիւնն ասում ատ՛ ձեր երկրի կառավարութիւնը մեզ էս թոյլտուութիւնը տուել, ա, էկել ենք ներդրում ենք արելզգգ Յոյս ունենմ, որ մենք լուծում կը գտնենք: Ես էլի ցաւում եմ, որ «Լիտիան

Արմէնիա» ընկերութիւնը յամենայն դէպս իմ այցի շրջանակներում կառուցողական մօտեցում չցուցաբերեց»:

Բնապահպանները, «Լիտիան Արմէնիա» ընկերութեան դեկավարութիւնը եւ վարչապետը Ձերմուկի մէջ համաձայնութեան չէին եկած՝ հանքավայրին մէջ աշխատանքները ժամանակաւորապէս կասեցնելու շուրջ՝ մինչեւ լուծումը գտնուի:

Նիկոլ Փաշինեանն ըսած է, որ մտահոգուած է առաջին հերթին բնապահպանական խնդիրներով:

Ընկ. Կիրակոս Թիւթիւնճեանի Ելոյթը Հնչակեան Քսան Կախաղաններու 103-Ամեակին Առթիւ



Այսօր, համախմբուած ենք այս սրահին մէջ անգամ մը եւս մեր յարգանքը մատուցելու Հնչակեան Կուսակցութեան անմահ Քսաններու յիշատակին:

Պատմութիւնը մարդոց սիրագործութիւններու վկայարանն է: Մեծամասնութեամբ արիւնով արձանագրուած էջերու հայելին:

Հայ ազգային ազատագրական պայքարի բախտորոշ եւ անկիւնադարձային պահերուն Հնչակեան կուսակցութեան քաղաքական միտքն ու իրականութեանն էին իրատես կեցուածքները պատմական արժէքով կը գնահատուին այսօր:

Սուլթան Ապտուլհամիտի գահակալութենէն ետք, հայ ժողովուրդին ազատութիւն եւ ինքնավարութիւն խոստացող Իթիհաստը, իր տեսակին մէջ եզակի դաւադրութիւն մը կը պատրաստէր անոր դէմ:

Եղբայրութիւն, հաւասարութիւն եւ արդարութիւն խոստացող Իթիհաստը, Նոր Սահմանադրութենէն տարի մը չանցած Ատանայի կոտորածով եւ հայ ժողովուրդի ինքնապաշտպանութեան մարտկոցը աստիճանաբար զինաթափող Իթիհաստական Թուրքիան կը նախապատրաստէր հայասպանութեան ոճրային ծրագիրը:

Երիտասարդ Թուրքերու սին խոստումներէն տարուած քաղաքական եւ ազգային շրջանակներու կրաւորական համակերպումին եւ գործակցութեան քայլերուն դիմաց Հնչակեան կուսակցութեան յեղափոխական եւ հեռատես միտքն էր, որ նախազգալով այս բոլորը, կոստանցայի մէջ գումարած իր

համաժողովին ահազանգեց համագային ինքնապաշտպանութեան կազմակերպումը եւ որոշեց զինեալ դիմադրութեան դիմել, ընդլայնուեալ գործունէութեան անցնել Իթիհաստի դէմ, ինչպէս նաեւ ֆիզիքական հաշուեյարդարի ենթարկել Իթիհաստի ղեկավարները:

Դժբախտաբար բացայայտուեցաւ Հնչակեաններու յանդուգն ծրագիրը: Անոր յաջորդեցին ձերբակալութիւններ, հարցաքննութիւններ: Թալէաթ անձամբ հետամուտ դարձաւ, որպէսզի Ռազմական Ատեանը ծանրագոյն պատիժի ենթարկէ Հնչակեան գործիչները: Դատավարութիւնը տեսց 17 օր: Ռազմական Ատեանը մահապատիժ վճռեց քսան Հնչակեան յեղափոխականներուն համար, եւ ահա 15 Յունիս 1915-ի վաղ առաւօտեան, Պայագիտ հրապարակին վրայ Քսան Հնչակեան գործիչներ կախաղանի վրայ իրենց արեամբ վճարեցին հայ ժողովուրդը թուրք եաթաղանէն փրկելու գինը:

Կատաղած ցեղասպանը Քսաններու նահատակութեամբ կ'ակնկալէր գլխատել հայ ժողովուրդի ազատագրական պայքարը: Բայց ան չարաչար ձախողեցաւ:

Գում Գափու թաղամասի քահանայ Գալուստ Պողոսեանի վկայութեամբ, կախաղան բարձրացող առաջին դատապարտեալը եղաւ մեղրեցի յեղափոխական, հրապարակախօս Փարամազը, աւագանի անունով՝ Մատթէոս Սարգսեանը:

Կախաղանին առջեւ կանգնած Փարամազ, Քսաններու անզուգական ղեկավարը կը մարգարէանար հայ ժողովուրդին ազգային եւ

ընկերային մօտալուտ վերստին ծնունդը. «Դուք մեր մարմինները կը կախէք, գաղափարը ոչ». Կ'ըսէր Փարամազ:

Սեբաստացի բժիշկ Պեննէ, աւագանի անունով Պետրոս Թորոսեան, կախաղան բարձրանալէ առաջ յայտարարեց. «Դուք քսաններս կը կախէք, բայց քսան հազարներ պիտի հետեւին մեզի»:

Յաջորդաբար կախաղանի պարանը անցաւ մնացեալ դատապարտեալներուն վրայ՝ Արաբկիրցի Արամ Աչըբաչեան, Գեղամ Վանիկեան, Երուանդ Թոփուզեան, Ռուբէն Կարապետեան, Արմենակ Համբարձումեան, Գառնիկ Պոյաճեան, Երեմիա Մանուկեան, Յակոբ Պասմաճեան, Յովհաննէս Տէր Ղազարեան, Թովմաս Թովմասեան, Մուրատ Զաքարեան, Մկրտիչ Երիցեան, Գարեգին Պողոսեան, Աբրահամ Մանուկեան, Մինաս Քէշիշեան, Սմբատ Գըլճեան, Հրանդ Եկաւեան, Պողոս Պողոսեան:

Այսպիսի դաժան ճակատագրի դատապարտուեցան Քսանները: Մահապատիժի գործադրութեան ներկայ քահանային վկայութեամբ ոչ մէկ տրտունջ կամ դժգոհութիւն կը լսուէր անոնց բերէն, որովհետեւ Քսանները համոզուած նուիրեալներն էին հայ ազգային ազատագրութեան պայքարին:

Քսաններու սիրագործութիւնը դուրս գալով կուսակցութեան սահմաններէն դարձաւ համայն ժողովուրդի հպարտութիւնը: Սուլթան Պայագիտի վրայ բարձրացած Քսան մահասիւնները կը հանդիսանային ոչ միայն հայ ազգային ազատագրական պայքարի վկայները, այլեւ Արեւելքի հորիզոնին վրայ ուրուագծուող ապագայ Հայաստանի յարութիւնը:

Իթիհաստականները մահապատիժի ենթարկեցին Քսանները, հրէշային կոտորածի ենթարկեցին ամբողջ հայ ժողովուրդը, բայց յաջողեցան ճգմէլ հայ ժողովուրդի յեղափոխական կամքը, որովհետեւ ոչ մէկ ուժ կրնայ ծունկի բերել կախաղանէն չվախցող ժողովուրդը:

Յարութեան շունչը չուշացաւ հայութեան համար, երբ 1915-ի ցեղասպանութենէն եւ Արեւմտահայաստանի յափշտակումէն քանի մը տարի ետք, Սարգարապատի յաղթանակը վերականգնեց Հայաստանի պետականութիւնը՝ առաջին հանրապետութեան հիմնադրութեամբ:

Իւրաքանչիւր առիթով երբ կ'ոգեկոչենք Քսանները, ակամայ հարցում մը կը պատէ մեզի արդեօք Իթիհաստի հարուածը ծանր պիտի ըլլար մեր ժողովուրդին համար, եթէ հայ քաղաքական հոսանքները օրին անսային համա-

հայկական ինքնապաշտպանութիւն կազմակերպելու Հնչակեան Կուսակցութեան կոչերուն:

Քսանները ֆիզիքապէս մեզի հետ չեն այսօր, սակայն առշուտ պիտի մնայ միացեալ ուժ դառնալու հայ ժողովուրդին յղած անոնց պատգամը:

Քսանները միասնականութիւն կը պատգամեն համայն հայ ժողովուրդին՝ Սփիւռք եւ հայրենիք: Այո, միասնականութիւն կը պատգամեն Քսանները, այնպէս ինչպէս միասնականութիւն կը պատգամեն մեր մէկուկէս միլիոն նահատակները, Եռաբլուրի մէջ ննջող մեր քաջարի ազատամարտիկները:

Յարգելի ներկաներ, գաղափարական աւիւնով դաստիարակուած Փարամազը եւ անոր ընկերները անմահութեան հաւատքով իրենց կեանքը նուիրեցին պատմական այն բազմիմաստ, որ կը կոչուի Հայաստան:

Հայկական պետութիւնը, արեւմտահայաստանի ազատագրութիւնը եղած են ու պիտի մնայ Քսաններու Կուսակցութեան գոյութեան պայմանականութիւնը:

Հայազգային ընտանիքի անդամ պետութիւն դարձած է այսօր: Սակայն հզօր եւ օրէնքի գերակայութեան վրայ հիմնուած պետութիւն կառուցելու մեր ճիգերը կը հակադրուին արտաքին եւ ներքին՝ ընկերային, տնտեսական սուր տագնապներու: Միւս կողմէ, սփիւռքը նոյնպէս կ'ապրի տագնապ: Դիտեցէք մեր զաղութներուն այսօրուան իրավիճակը: Անընդունելի է համակերպիլ հիւժող հայրենիքի եւ սփիւռքի իրականութիւններուն: Այստեղ է, որ կ'արժեւորուի հաւաքական մտածողութեան Քսաններու պատգամը:

Յարգելով իւրաքանչիւրին իւրապատկութիւնները, ներդաշնակութիւն ստեղծել տեսակէտներու բազմազանութեան մէջ, ծրագրաւորէր համահայկական ուժի վերածուիլ եւ հաւաքական մտածողութիւն դրսեւորել մեր դէմ ցցուող բոլոր մարտահրաւէրներուն դէմ:

Քսաններ ծնող Հնչակեան Կուսակցութիւնը հայապահպանութեան անփոխարինելի օճախը՝ Հայաստանը համարելով, անխախտ հաւատարմութեամբ կանգնած է հայրենի պետութեան կողքին: Հզօր պետութիւնը Հնչակեան Կուսակցութեան համար գրաւականն է ոչ միայն ներկային, այլեւ ամբողջական Հայաստանի իրականացման: Խորհրդային Միութեան փլուզումէն ետք, մենք շրջանցելով մեր ընկերային համոզումները, առաջ-

Շար.ը էջ 18



MARONIAN
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served our community's insurance needs.

CA Insurance Lic. #0C99815



WELCOME HOME & AUTO INSURANCE

Along with all of our other *Trusted Insurance Services*



We will shop you with over 20 A-rated companies to find the best fit for your needs and budget.

CALL US FOR A PERSONALIZED QUOTE

(818) 500 9305



Hunchakian Twenty Gallows Commemorated In Pasadena



PASADENA -- On Sunday, July 15, the Commemoration of the 103rd anniversary of the 20 Hunchakian Gallows was held in Pasadena Ca.

The event organized by the SDHP "Paramaz" chapter of Pasadena took place at the Giragos Hall of the St. Gregory Armenian Church.

Among the attendees and guest were Primate of the Western Diocese, Archbishop Hovnan Derderian, Arch. Vatch Hovsepian, members of the Central Committee of the SDHP and the Executive Body of USA, the chairman and members of the Regional Committee of the Liberal Democratic Ramgavar Party, representatives of AGBU, chairman of the Istanbul-Armenian Union, Armenian media representatives and

large number of party members and supporters.

The evening started with the national anthems of the United States and the Republic of Armenia and the anthem of SDHP. After master of ceremony Mrs. Taguhi Arzumanyan's emotional opening, remarks were delivered by the "Paramaz" chapter chairman Diran Jerejian.

A message in English was delivered by "Gaidz" Youth Organization and Armenian Council of America member Vahan Khodanian.

The main speaker of the day was member of the SDHP Central Committee Giragos Tutunjian, who was invited from Canada. In his comprehensive speech, he made an assess-

ment of the activities of the Hunchakian Twenty's in pursuit of their goal of establishing a free and democratic Armenia. The speaker stated that few short years later, their goal became a reality at the battlefields of Sardarabad, which was followed by the establishment of the first Armenian Republic.

Mr. Tutunjian greeted the victory of the People's Revolution in Armenia, touching upon the participation of the SDHP in the movement. He expressed the party's support for the current leadership of Armenia and its readiness to work with Prime Minister Nikol Pashinian's government in pursuit of social, economic and political reforms in the homeland.

Archbishop Derderian in his short remarks blessed the 20 Gallows and their followers.

During the evening, an artistic program was presented with the participation of the "Nor Serount" Cultural Association dance group, Taguhi Arzumanyan, who recited a poem written by her on the occasion of the 100th anniversary of the Armenian Genocide, well known singers Harut Hakobian, Araxia Amirkhanyan and Arno Mkrtchian who all performed national and patriotic songs.

The celebration was closed in an enthusiastic atmosphere, with the singing of "Hunchakian Enk Menk".

EU Expects Armenia to Propose "Concrete Ideas" for Assistance

YEREVAN (RFE/RL) — The European Union needs to hear "very concrete ideas" from the new Armenian government before it can consider increasing economic assistance to Armenia, the head of the EU Delegation in Yerevan, Piotr Switalski, said on Monday.

Responding to Prime Minister Nikol Pashinian's criticism of the EU voiced last week, Switalski said the government has yet to come up with a set of specific reform-oriented projects requiring EU funding.

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԻՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ «ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԿՐՕՆԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ ԵՒ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՍՏԵՂԾԱՆ ՓՈՐՁԸ»

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հրատարակչական բաժինը լոյս ընծայած Պ. Ք. Թ., Դոցենտ Աւետիս Յարութիւնեանի «Վան-Վասպուրականի կրօնամշակութային կեանքը եւ պետականութեան ստեղծման փորձը (1908-1918)» գիրքը: Հրատարակութիւնը նուիրուած է հայոց պետականութեան վերականգնման եւ Հայաստանի Առաջին Հանրապետութեան հռչակման 100-ամեակին:

Աշխատութիւնը կը ներկայացնէ Վան-Վասպուրականի 1908-1918 թթ. պատմութիւնը, եկեղեցական եւ մշակութային կեանքը, ինչպէս նաեւ ազատագրական պայքարն ու պետականութեան ստեղծման փորձերը:

Գիրքը հրատարակուած է մեկենասութեամբ «Սարգիս Գաբրիէլեան» հիմնադրամի:



Լատքին կառչածութիւնը հայուն տուած է կեանք ու աւելի կեանք:

Հրայր ձէպէճեան կը նշէ, որ հայկական իրականութեան համար, մեծ պարտականութիւն է մեր մշակութային ժառանգը եւ արժէքը իր ամբողջական հասկացողութեամբ, իբրեւ պատգամ փոխանցել մեր ժողովուրդին:

Համաշխարհայնացման մասին խօսելով ձէպէճեան կ'ըսէ, որ անիկա ընթացք մըն է, որ իր ազդեցութիւնը կ'ունենայ մարդկային կեանքին վրայ՝ քիչ մը ամէն տեղ: Եթէ մարդիկ տարբեր շրջաններու եւ երկիրներու մէջ ապրելով հանդերձ պիտի կարենան վայելել տարբեր պատեհութիւններ եւ առիթներ, բայց եւ այնպէս նաեւ վտանգները եւ սպառնալիքները պիտի բաժնուին աշխարհին եւ իրարու մէջ: Որեւէ երկրի քաղաքական, տնտեսական, կենսոլորտային ու այլ իրավիճակները իրենց ազդեցութիւնը պիտի ունենան ուրիշ տեղեր: Մնունդ, ապրելակերպ, երաժշտութիւն, ծանուցում, համաշխարհային գրականութիւն ու տակաւին բոլոր իրավիճակները կը զգենան ու կ'անցնին սահմանային բաժանումներու իրողականութիւններէն:

Դոկտոր Հրայր ձէպէճեանի «Սփուրքասայ կեանքեր՝ ինչպէս որ տեսայ» գիրքին շնորհահանդէսին առիթով Շահան Գանտարեան ըսաւ, որ դոկտ. Հրայր ձէպէճեանի բոլոր պատմութիւնները կը վերաբերին սփուրքին, սփուրքահայ կեանքերուն. անոնք կեանքեր են՝ ապրուած ու անորոգ կեանքեր, որոնք կը բնութագրեն պատմութեան ճակատագրորոշ իրադարձութիւններուն ձգած ազդեցութիւնը տարբեր սերունդներու վրայ, ինչպէս մարդկային, այնպէս նաեւ ազգային կերտուած քններուն վրայ: Տագնապներ, ձգտումներ, հայկականութիւնը պահելու ապրումներ, ճիգեր, մտահոգութիւններ, անձկութիւններ եւ մանաւանդ յոյսեր: Անոնք բոլորն ալ ներկայացուած են ո՛չ միայն իբրեւ պատմութիւն կամ պատմուածքներ, այլեւ այս անգամ խորագիրին երկրորդ մասը նկատի ունենալով՝ ինչպէս որ Հրայր ձէպէճեան ընկալած է զանոնք:

Խաչիկ Տէտէեան ըսաւ, որ Հրայր ձէպէճեանի որոնումներուն կիզակետը եւ առանցքը մարդն է: Փնտռել ու վեր հանել մարդկային գիծը մարդուն մէջ: Նախապաշարուած է

իր համոզումներուն մէջ: Ան կ'որոսայ յոյսը, հայուն յոյսը, մարդարարածին յոյսը, այսինքն՝ գոյատեւելու, վաղուան նայելու յոյսը՝ իւրաքանչիւր քաղաքի մէջ, ուր կ'այցելէ, իւրաքանչիւր հայու, որ կը հանդիպի, այդ հայ մարդու անցեալին եկող տառապանքին, ցաւին, պայքարին մէջէն վաղուան յոյսը փնտռելու եւ տեսնելու լաւատեսութիւնը կ'ապրի եւ կ'ապրեցնէ իր ճանապարհորդութիւններուն ընդմէջէն:

Ահարոն Շիրումեան ըսաւ, որ Հրայր ձէպէճեանի սփուրքը եւ Հայաստանը կ'ապրի անոնց առօրեայ տագնապներով, տեսիլքներով, քարերով, ձեռագիրներով, աւանդութիւններով եւ յոյսերով: Ան լաւ ճանչցած է մեր ժողովուրդի պատմութիւնը: Պաշտամունքի համոզ սէր ունի Հայաստանի եւ սփուրքի, հայ գիրքին եւ մշակոյթին նկատմամբ: Անոր վերլուծումներուն մէջ նաեւ ներկայ է մեր եկեղեցուց աստուածաբանութիւնը, հաւատքը, ծէսը, մեր եկեղեցուց ամբողջ պատմութիւնը, որովհետեւ գիտէ, որ մեր ժողովուրդի կեանքին մէջ մշակոյթը, հաւատքը եւ եկեղեցին սերտօրէն ընդգլուցուած են իրարու հետ:


Դոկտ. Արտա ձէպէճեան ըսաւ, թէ Հրայր ձէպէճեանի իւրաքանչիւր յօդուածը փաստաթուղթ մըն է, որ կը հաստատէ ո՛չ միայն հայուն ներկայութիւնը, այլ նաեւ կը փաստէ հայուն գոյատեւելու պայքարը, ինքզինք գերազանցելու անխոնջ աշխատանքը, քրիստոնէական հաւատքը պահելու խանդը եւ ազգային դիմագրելու պահանջները:

Դեհապան Սամուէլ Մկրտչեանը ըսաւ, թէ հատորին պատմութիւնները միաւորող գաղափարներ ունին, մեր ժողովուրդին առնչուող մտահոգութիւններու գաղափարներ, որոնք կարծիք թելի նման կ'անցնին հատորի բոլոր պատմութիւններով, որովհետեւ մարդկային ճակատագիրներ են, մարդկային կեանքեր՝ սփուրած իրենց լայն աշխարհագրութեամբ:

Յակոբ Բագրատունի ըսաւ, թէ ձէպէճեան իր սկզբունքները կը ներկայացնէ համոզելու բացառիկ կարողութեամբ, այնպէս ինչպէս կը տեսնէ:

Իսկ Շահէ սրբազան ըսաւ, որ Հրայր չի կրնար իսկուրի կիբանանէն ու լիբանանահայութեանէն եւ չի կրնար բաժնուիլ ու անջատուիլ իր բարեկամներէն:

ՍՈՒՐԲ ԼՈՅՍ ԼԵՈՐ՝ ՀԱՅԵՐԻ ԵՒ ՔՐՏԵՐԻ ՈՒՆՏԱՏԵՂԻ



ՕՔՍԱՆԱ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Առտու կանուխ Նոյ նահապետը իր տապանով լողալիս կ'ըլլար ջրհեղեղի ջրերում եւ յանկարծ նրա տապանը կը դիպչէ լեռան գագաթին: Նոյը լեռը Սուրբ Լոյս կը կոչէ:

Սուրբ Լոյսը վեր կը խոյանայ Բիւրակն-Մնձուրեան լեռնաշղթայի արեւմտեան հատուածում, այն նոյնանուն՝ Սուրբ Լոյս լեռնաշղթայի գագաթներէն մինն է եւ կը գտնուի ջրերով, մթին անտառներով եւ լեռնաշղթաներով հարուստ Տէրսիմում:

Ի դէպ՝ կ'ըսեն թէ Տէրսիմ տեղանունը հայ քահանայ Տէր Սիմոն անունէ կը ծագէ, ով, ըստ ավանդազրոյցի, թուրքական ներխուժումների ժամանակ համոզել էր տեղի հայերին հաւատափոխ լինել, դառնալ ալեւի եւ այդպիսով խուսափել կոտորածէն:

Սրբուս, Սրբլիս, Սիլբիս, Սիպուս, Սուլփուս, Տիգկին պապա եւ այլ անուններով յայտնի Սուրբ Լոյս լեռնաշղթան 2 աղբորով սկիզբ կ'առնէ Բագուս լեռնագագաթէն եւ 80 քմ երկարելով դէպի հարաւ՝ կը հասնի մինչեւ Մնձուր եւ Քղի գետերի խառնուրդը՝ դառնալով վերջիններս ջրբաժանը:

Լեռնաշղթան հարուստ է մթին անտառներով, որոնցմով կը հոսին սառնորակ աղբիւրներ եւ կը ծաղկեցնեն փարթամ կանաչով լանջերը: Ունի իւրաքանչիւր քարայրներ, որոնք մշտապէս գրաւուած են հայ, ապա եւ՝ քուրդ ու խոստաւորներու ուշադրութիւնը:

Մնձուր եւ Քղի գետանունները նշելիս չիշենք, որ սրանք Արածանի վտակները սնուցող գետերն էին, Մնձուրը Փերի գետի աջակողմեան վտակն էր, իսկ Քղին՝ Արածանի աջակողմեան Փերի վտակի միջին հոսանքը, այն Լեչեզ-Քղի-Փերի հոսանքներով հնում կը կոչուէր Պաղին եւ կը հոսէր, ինչպէս արդէն հասկացանք, Տէրսիմի միջով:

Մնձուր եւ Քղի անուններով ունէինք նաեւ Մնձուրի լեռնաշղթան, որի գագաթներէն է Մնձուրի լեռը՝ 3188 մ, որի լանջերը կը ձգուեն մինչեւ Եփրատի ձախափնեայ կողմերը: Կ'ըսեն թէ հովիւ մը՝ Մուսկուր անունով, կորչել է լեռան խորխորատներում, ահա լեռան անունն ալ Մնձուր է մնացել:

Մնձուր լեռը յայտնի է իր քառասունի հասնող կաթնազոյն ակնաղբիւրներով, որոնք նոյնպէս տէրսիմցի հայերի եւ քուրդի համար մեծ ուխտատեղի էին: Կը

հաւատային թէ դրանք Անահիտ դիցուհու ստինքներէն կը հոսին եւ վարդավառին անպայման կը հաւաքուէին այստեղ՝ (...մի տեղ ձիարչաւ էր, նշանաձգութիւն, մի տեղ էլ սրինգների միալար հնչող լո-լո-լո-ն էր գեղգեղում, ուրիշ տեղ ջիւրիդ էին խաղում...0»:

Քղի անունով կը չիշենք Քղի լեռները, էրզրումի գաւառի Քղի գաւառակը, Քղի գիւղաքաղաքը, իր Քղի բերդով, որ կ'ըսեն թէ նոյնական է հին կողաբերդին: Գիւղի միջով կ'անցնի Քղի գետը, մօտակաջքում Սեւտախառում եւ Քարագլուխ լեռնագագաթներն են, ուրկէ կը բխի Ս. Աստուածածին աղբիւրը՝ հայերի, նոյնպէս եւ՝ քուրդի ուխտատեղի:

Քղիի մօտ է նաեւ Պոզաքար ժայռաբեկորը, որի տակ, կը հաւատան, շատ ոսկի կայ թաղած, եթէ մէկը մինակ իր ուժերով կրցաւ քարը գլորել, նա կրնայ տիրանալ այդ գանձերուն:

Քղին կը համարուի Արշակունեաց արքայատոհմի ամարանոցը: Քղիէն 1,5 քմ հեռավորութեան վրայ գտնուող ժայռապատ լեռ մը կայ, գագաթին՝ հին բերդի ակերակներ: Կը կարծեն թէ սա Արշակունի սեպուհների նստավայրն էր եւ կառուցուել է 4-րդ դարում:

Քղիի արեւմտեան կողմում ալ կը գտնենք բուն Սուրբ Լոյս լեռը: Այն կ'անուանեն նաեւ Զաւակատուր կամ Միածին, Միանձում, Սրբլիս, Սուրբ Լուսայ լեռ եւ այլն: Թուրքերը Զաւակատուր անունը թարգմանել են եւ լեռը կոչել Օղլանվերան կամ Օղլանվերեն:

Մինչ 20-րդ դարու սկիզբը ամէն տարի Տէրսիմի, Քղիի հայերն ու քուրդերը, ապա՝ քրտացած հայերը վարդավառին ուխտի կը գալին երկու գագաթ Սուրբ Լուսայ լեռը: Քանի մը հաստաբուն գիհի ծառ կար լեռան լանջերին, սակայն ոչ ոք չէր համարձակեր ճիւղ մը անգամ պոկել, քանի որ դրանք նուիրական էին:

Ուխտագնացութեան պատրաստութիւնը կը սկսէր շաբաթ օրը, թոնիրը չէր հանգչիր, բոլորը ջուր կը տաքցնէին, որպէսզի ուխտի գնալէ առաջ նախ լողանան, ապա հագնեն իրենց տօնական հագուստն ու կապեն գարդերը: Գաթայ, լաւաշ եւ բազմաթիւ խորտիկներ կը պատրաստէին:

Հարկ էր, որ գժտուածները հաշտուէին, այլապէս՝ իրենց ուխտը ընդունելի չէր լինէր, իսկ Սրբլիսի ուխտը նրանց ամենամեծ ուխտն էր, երզումը՝ ամենամեծ երզումը:

«Melkonian Global Overture» Կազմակերպուիւնը 11 Կրթաթոշակ կը Յատկացնէ «Զարմանագան» Արեւմտահայերէնի ճամբարին

Zarmanazan 2018
Innovative Western Armenian Summer Programme

Open to children and young adults from the Armenian Diaspora, a variety of workshops conducted in Armenian led by a team of experienced facilitators, in the French Alps.

Music | Theatre | Dance
Arts and crafts | Creative writing
Reading workshops | Games and sports
Debates | Field trips

«Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկութեան Հայկական Համայնքներու բաժանմունքը Լոս Անձելըսի «Melkonian Global Overture» ոչ-շահութաբեր կազմակերպութենէն առատաձեռն նուիրատուութիւն մը ստացած է, որ պիտի յատկացուի այս ամառ «Զարմանագան» արեւմտահայերէնի ճամբարին մասնակցող երիտասարդներուն: Տասը հազար տոլարի նուիրատուութիւնը պիտի տրամադրուի տարբեր երկիրներէ (Լիբանան, Յունաստան, Միացեալ Նահանգներ, Թուրքիա, Գանատա եւ Ֆրանսա) եկող 11 համալսարանական ուսանողներու արձանագրութեան ծախսերը փակելու:

Հայկական Համայնքներու բաժանմունքը 2017-ին ձեռնարկեց «Զարմանագան» կրթական նախագիծին, որ բաժանմունքի արեւմտահայերէնի ամրապնդման ծրագրին մաս կը կազմէ: Ան կը կազմակերպուի L'association Mille et un Mondes-ի (Լիոն, Ֆրանսա) եւ Institut National des Langues et Civilisations Orientales-ի (INALCO) (Փարիզ, Ֆրանսա) գործակցութեամբ: «Զարմանագան» ճամբարը վկայուած է Ֆրանսայի Երիտասարդութեան եւ Մարզանքի նախարարութեան կողմէ:

Այս տարի, «Զարմանագան»ը տեղի պիտի ունենայ Ֆրանսայի

Ֆրանքեզուիցերիական Ալպեան լեռներու շրջանին մէջ, 15 Յուլիսէն մինչեւ 9 Օգոստոս: Անոր պիտի մասնակցին 10-էն 15 տարեկան աւելի քան 50 պատանիներ եւ 16-էն 24 տարեկան 29 երիտասարդներ: Ճամբարը չորս երկիրներէ եկող 15 ուսուցիչներու յատուկ վարժընթացի բաժին մըն ալ պիտի ունենայ: Ամբողջ գործունէութիւնը հայերէնով կ'ընթանայ:

«Շատ երախտապարտ ենք այս աջակցութեան համար», յայտնեց Հայկական Համայնքներու բաժանմունքի տնօրէն Ռազմիկ Փանոսեանը: «Քաջալերական է տեսնել, որ նուիրատուները արդէն կ'ըմբռնեն «Զարմանագան»ի արժէքը՝ իրենց նիւթական նպաստը բերելով, որպէսզի երիտասարդ տղաք եւ աղջիկներ ճամբարին կարենան մասնակցիլ»: Արսինէ Շիրվանեանը՝ «Melkonian Global Overture»-էն, աւելցուց. ««Զարմանագան»ը հայերէնի ու հայ մշակուցի փորձառութիւնը ապրելու նորարար, դրական ու ստեղծագործական հարթակ մըն է երիտասարդութեան համար: Որոշեցինք այս կրթաթոշակները տրամադրել՝ Գրիգոր ու Կարապետ Մելիգոնեաններու յիշատակին, ներշնչուելով անոնց բարեգործութենէն ու աշխարհափիւռ հայերու կրթութեան օժանդակելու ցանկութենէն»:

Սրբլիս բարձրանում էին ոտքով, կանայք՝ ոտաբոսպիկ, ընդհանրապէս՝ որքան մեծ էր ուխտը, այն քան մեծ պիտի լինէր չարչարանքը:

Առտու կանուխ կը հասնէին ստորոտի աղբիւրին, ուր կը նախաճաշէին: Աւելի վաղ տեղ հասած-

ները ջուր կը ցողային յաջորդների վրայ: Ապա կը բարձրանային գագաթը, ուր հայ թէ քուրդ ուխտաւորները կը ծնկէին գետնի վրայ, մի-մի ափ հող կը վերցնէին եւ երեսներին ու աչքերին կը քսէին ու կը համբուրէին քարերը:

oksana.karapetian@gmail.com

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈԳԻ ԸՍՍԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸՍՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ՄԱՐՄՆԻ ՏԱՐԲԵՐ ՀԱՏՈՒԱԾՆԵՐՈՒ ԿՐԱՅ ՅԱՅՏՆՈՒԲԾ ԽԱԼԵՐԸ ԵՒ ԱՆՈՆՑ ԿԱՊԸ ՄԵՐ ԲՆԱԿՈՐՈՒԹԵԱՆ ՀԵՏ

- Ափի կամ ոտնաթաթի խալ: Մարմնի այս հատուածներուն վրայ խալը շատ քիչ կը պատահի: Բայց եթէ դուք այդ խալ հատուածին վրայ խալ ունիք, ուրեմն կրնաք ձեզի բախտաւոր մարդ համարել: Ձեռքի ափի կամ ոտնաթաթի վրայ խալ ունեցող մարդիկ յաջողակ կ'ըլլան: Ձեռքի ափի խալը կը խորհրդանշէ հարստութիւն, իսկ ոտնաթաթի խալը՝ երկարատեւ եւ հետաքրքրական ճամբորդութիւններ: Այդ մարդիկ բաց են, շփուող, հետաքրքրասէր, հաճոյքով նոր ծանօթութիւններ կը հաստատեն եւ կ'ուսումնասիրեն նոր վայրեր:

- Կոպի խալ: Ամենայն հաւանականութեամբ, դուք ձեր կեանքը չէք պատկերացներ առանց ընտանիքի եւ մտերիմ մարդոց: Ձեր ընտանեկան օճախը ամենակարեւորն է ձեր կեանքին մէջ:

Դուք կրնաք ներդաշնակ, յարմարաւէտ մթնոլորտ ստեղծել գրասենեակին մէջ, ընկերային երեկոյթի եւ նոյնիսկ ճաշերոյթի ժամանակ: Մարդիկ միշտ կը ձգտին դէպի ձեզ, դուք պատրաստակամ էք, բարի եւ միշտ հասնող ուրիշին:

- Վերին շուրթի խալ: Այս հատուածին վրայ խալը կը վկայէ, որ դուք շատ փակ մարդ էք, բայց ատիկա միայն ձեզի խորհրդաւորութիւն կը հաղորդէ: Դուք սովոր չէք ձեր սիրտը բանալու առաջին պատահած անձին եւ հաստատ չէք քննարկեր ձեր անձնական կեանքը, բայց ասոր փոխարէն, եթէ արդէն ոեւէ մէկուն հետ մտերմացած էք, այդ յարաբերութիւններուն կարելի է միայն նախանձիր: Դուք նաեւ հիանալի ընկեր էք, որ երբեք գաղտնիքը չի բացայայտեր եւ չի խաբեր:

- Յօնքի մէջի խալ: Հաւանաբար դուք ի ծնէ ասպարէզի մարդ էք: Ասպարէզի վերելքի ճանապարհին ձեզի ոչինչ եւ ոչ ոք կըրնայ կանգնեցնել: Դուք զարմանալիօրէն խորաթափանց էք, անհաւանական ուժով լեցուն եւ ունիք մեծ յաւակնութիւններ: Դուք լիովին կրնաք առաջնորդ դառնալ, ձեր խաբիբման կը նուաճէ շատերը: Սակայն զգո՛յշ եղէք, շատ յաճախ նման մարդոց նախանձողները շատ են: Անոնցմէ ոչ մէկ տեղ կրնաք

փախչիլ, ուղղակի պէտք է ժամանակին նկատէք եւ սորվիք տարբերել թշնամիներն ու ընկերները:

- Ոտքի խալ: Դուք շրջապատի հոգին էք: Ձեզի համար լաւագոյնը Շաբաթ երեկոն աղմկոտ հաւաքոյթի մէջ անցընելն է՝ մեծաթիւ ընկերներու եւ ծանօթներու միջավայրի մէջ: Դուք շատ աշխոյժ էք, եռանդուն, կը վարէք աշխոյժ կենսակերպ եւ չէք կրնար մէկ տեղ նստած մնալ: Ձեր տկարութիւնը այն է, որ երբեմն կը դժուարանաք սկսած գործը աւարտին հասցնելու՝ աշխատանք, թէ ուսում: Աւելի պատասխանատու եղէք եւ առաջնայնութիւնները ձեզի համար ճիշդ բաժնեցէք: Այդ պարագային է, որ ձեր եռանդով դուք հիանալի արդիւնքներու կրնաք հասնիլ:

- Ձեռքի խալ: Դուք շատ հաւասարակշռուած եւ ներդաշնակ մարդ էք: Սովոր չէք շտապելու, իսկ ձեր պայուսակին մէջ միշտ կարելի է գտնել ծրագրաւորուած գործերով եւ նշանակուած հանդիպումներու ժամերով նօթատետր: Պարտաճանաչութիւնը ձեր ուժեղ կողմն է: Ձեզի բնորոշ չէ յանպատրաստից եւ չկշռադատուած որոշումներ կայացնելը, չէ՞ որ դուք միշտ կը մտածէք հետեւանքներու մասին: Երբեմն ձեզ չի խանգարեր լաւ ցնցում մը: Փորձեցէ՛ք գործնական հանդիպման փոխարէն ընկերուհի հետ սրճարան երթալ, ընտանիքով խաղ մը խաղալ կամ պարզապէս մնալ տունը եւ դիտել սիրելի ֆիլմ մը:

- Աջտոսկրի խալ: Դեմքի այս հատուածին վրայ եղած խալը կը վկայէ, որ դուք նպատակասլաց եւ փառասէր մարդ էք: Սովոր էք միշտ առաջինը ըլլալու եւ հասնելու ձեր ուզածին, ինչ ալ որ արժէ ատիկա: Դուք օժտուած էք առաջնորդի որակներով, մարդիկ ձեզմէ օրինակ կը վերցնեն եւ կը հետեւին ձեզի: Աշխատանքի մէջ ձեզի համար ամենայնարմարը պետի պաշտօնն է, քանի որ դուք կրնաք մարդոց դեկավարել եւ անոնց հսկողութեան տակ պահել:

- Պարանոցի խալ: Դուք զգայուն եւ ռոմանթիկ անհատականութիւն էք: Աղմկոտ երեկոյթներու

Շար.ը էջ 19

ՉԱՓԱՋԱՆՑ ԶԳԱՅՄՈՒՆՔԱՅԻՆ ՄԱՐԴՈՑ ՍԻՐԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐ

Մարդիկ շատ չեն սիրեր բուռն կերպով իրենց զգացմունքները դրսեւորողները: Անոնց յաճախ կ'անուանեն «Չղալի» եւ կը փորձեն հեռու մնալ: Հոգեբանները, սակայն, կը բացատրեն, թէ ինչո՞ւ չափազանց զգացմունքային ըլլալը բնական է եւ ի՞նչ է այդպիսի մարդոց առաւելութիւնը:

1) Անոնք վտանգաւոր չեն, այլ՝ ամէկոտ եւ անպաշտպան՝ ի հարկէ, ոչ-բոլորին համար հաճելի են այնպիսի մարդիկ, որոնք կը կարծեն, թէ աշխարհը թատրոն է, իսկ գլխաւոր դերերու մէջ իրենք են: Դժուարութեամբ կարելի է նկատել, որ խանութի մէջ տեղը կամ խնդրայաւոր լոյս գործընկերուհի մօտ գոռգռացող իրականութեան մէջ շատ նուրբ հոգի մըն է: Անոնց այդպիսի պահուածքին պատճառը վախն է. վախը, որ իրենց չեն սիրեր:

Որքան ալ վառ, ինքնավստահ, հետաքրքրական եւ ինքնա-հաստատուած երեւայ մարդը, իրականութեան մէջ ան ինքզինք կը զգայ փոքր երեխայ մը, որ շատ կը վախնայ առանց ուշադրութեան մնալէն: Իսկ ի՞նչ կ'ընեն փոքրիկները, երբ մարդիկ կ'անտեսեն անոնց: Ի հարկէ, կը գրաւեն ուշադ

րութիւնը՝ լացով եւ դաւաճաններով: Քանի որ «տրամալի թագաւորները» անձնապէս ոչ-հասուն մարդիկ են, զարմանալի չէ, որ անոնց արձագանգներն ալ երեխայական են՝ ոչ-կայուն: Անոնցմէ չ'արժէր վախնալ՝ կը գոռգռան եւ կը հանգստանան՝ ստանալով շրջապատին ուշադրութիւնը:

2) Անոնք կրնան կարեկցիլ եւ լաւ ընկեր ըլլալ՝ Հակառակ տարբերող կարծրատիպերու, չափազանց զգացմունքային անձնաւորութիւնները յաճախ շատ լաւ են, հետաքրքրական, ուշադրութիւն գրաւող: Անոնց ոճը կ'արտայայտուի ոչ միայն աղմուկ բարձրացնելու տեսքով: Անոնք կրնան անձնագոհ փրկարար ըլլալ: Այսպիսի մարդիկ, նոյնիսկ բարձր ջերմաստիճանով, վերջին ուժերով օգնութեան կը սողան ընկերուհիին կամ ամուսինին: Անոնք կրնան դառնալ հասկցող, լաւ ընկերներ, քանի որ ունակ են այլ մարդու հետ ստեղծելու խոր զգացական կապ: Անոնք շատ նրբազգաց են եւ կրնան արտայայտել իրենց զգացմունքները:

3) Անոնք չեն սիրեր բացասա-

Շար.ը էջ 5

ՄԻ՛ ԱՐՅԱՄԱՐՅԷ ԱՅՍ ՆՇԱՆՆԵՐԸ. ՄԹԵՐՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿՇՕԳՆԵՆ ՇՏԿԵԼՈՒ ԻՐԱՎԻՃԱԿ

Արիւնատուութեան (anemia) բնորոշ է արեան մէջ հեմոկլոպինի ցած մակարդակը, երկաթի անբաւարարութիւնը: Արիւնատուութեան մասին կրնան վկայել շարք մը ախտանշաններ, որոնք հարկաւոր չէ անուշադրութեան մասին: Երկաթի անբաւարար մակարդակը կրնայ կապուած ըլլալ աղեստամոքսային խնդիրներով կամ դժբախտ պատահարներու հետեւանքով մեծ քանակով արեան կորուստով, ծանր դաշտանային շրջանով:

Արիւնատուութեան մասին կը վկայեն հետեւեալ նշանները. յոգնածութիւն, ուժի անբաւարար մակարդակ, օդի պակաս, սրտի փոց, սրտի յաճախակի զարկեր, ցաւ կրծքավանդակի հատուածին վրայ, ջղաձգումներ, դաշտանային շրջանի փոփոխութիւններ, նիւթափոխանակութեան խանգարումներ: Հարկաւոր է հաշուի առնել, որ արիւնատուութիւնը կ'ազդէ թէ՛ ֆիզիքական, թէ՛ հոգեկան առողջութեան վրայ: Մարդիկ դժուարութեամբ կը կեդրոնանան, անկարեւոր երեւոյթները կը սկսին ջղայնացնել իրենց, խնդիրներ կ'առաջանան ուրիշներու հետ յարաբերութեան ընթացքին: Արիւնատուութեան պարագային հարկաւոր է խորհրդակցիլ բժիշկին հետ եւ

բուժում ստանալ, ինչպէս նաեւ հետեւիլ այնպիսի աննդակարգի, որ հարուստ ըլլայ երկաթով:

- Սպանախ: Այս բանջարեղէնը հարուստ է երկաթով, բջիջա - նիւթով. A, B9, C, E կենսանիւթերով, քալիումով, պէթա-քարոթիմով:

- Կենդանական ծագման մթերք: Երկաթով հարուստ է կենդանական ծագման մթերքը. ի դէպ, անիկա աւելի լաւ կ'իւրացուի քան բուսական ծագման երկաթը: Կարմիր միսը, լեարդը, ծովամթերքը խորհուրդ կը տրուին արիւնատուութեան պարագային:

- Ամբողջահատիկներէ պատրաստուած հաց: Արիւնատուութեան պարագային խորհուրդ կը տրուի նախապատուութիւն տալ ամբողջահատիկէ պատրաստուած հացին:

- Հակիթ: Հակիթը պարտադիր պէտք է ներառուած ըլլայ աննդակարգին մէջ: Անիկա մարմնին կ'օգնէ ո՛չ միայն երկաթ ստանալու, այլեւ՝ այլ աննդարար նիւթեր, որոնք անհրաժեշտ են ոսկորներու եւ մկաններու ամրապնդման համար:

- Նուռ: Նուռը ունի մեծ քանակով երկաթ, որ դիւրութեամբ կ'իւրացուի արեան կողմէ: Այս միտքը հարուստ է նաեւ կենսանիւթերով, բջիջանիւթով, քալիումով:

ՆՇԱՆՆԵՐ, ՈՐՈՆՑ ԱՌԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՑՈՅՑ ԿՈՒ ՏԱՅ ԱՊԱԳԱՅ ՈՒՆԵՑՈՂ ՁԵՐ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

ՄԱՐԴԻԿ ԿՐԱՆ ԻՐԵՆՔ ՓՈԽԵԼ ԻՐԵՆՑ ՎԱՏ ՏՐԱՍԱԴՐՈՒԹԻՒՆԸ

1) Մարմնամարզանք: Մարզանքի ժամանակ մարմնին մէջ տեղի կ'ունենան կենսաքիմիական տարբեր փոփոխութիւններ, որոնք բարերար ազդեցութիւն կ'ունենան մարդու հոգեվիճակին վրայ: Սակայն, սիրելի կանայք, մարմնամարզութիւնը մի՛ համեմատէք տան աշխատանքի հետ (լուացք, արդուկ...): Արագ քալելը, վազքը, լողը եւ նման մարզանքներն են, որոնք կը խթանեն սրտի աշխատանքը, արեան շրջանառութիւնը եւ մարմինը կը հարստացնեն թթուածինով:

2) Երաժշտութիւն: Խորհուրդ կը տրուի սկիզբը լսել այնպիսի մեղեդի, որ կը համապատասխանէ ձեր տրամադրութեան, ապա աստիճանաբար փոխել երաժշտութիւնը, որպէսզի տրամադրութիւնն ալ փոխուի դէպի լաւը:

3) Մտուել: Այն մթերքները,

որոնք ունին ածխաջրեր, կը համարուին «հանգստացնող» սնունդ: Անոնք կը խթանեն սերոթոնինի գոյացումը գլխուղեղի բջիջներուն մէջ, որ կ'օգնէ մեր լարուած մարմնի եւ ուղեղի հանգստանալուն: Պէտք է նշել, որ սուրճի չափազանցութիւնը կը յանգեցնէ ընկճախտի զօրանալուն, տազնապի եւ գրգռուածութեան:

4) Գոյն: Սեւ, գոց-կապոյտ գոյները կ'առաջացնեն թախիծ: Կարմիր գոյնը՝ լարուածութիւն: Հանգստանալու համար ընտրեցէք չէզոք գոյներ, ջերմ ու բաց գոյնով հագուստներ եւ առարկաներ:

5) Լոյս: Անոնք որոնք կը տառապին ձմեռանային ընկճախտէ, խորհուրդ կը տրուի օրը 2-3 ժամ մնալ զօրաւոր արհեստական լուսաւորութեան պայմաններու մէջ, եւ տրամադրութիւնը պիտի բարձրանայ:

1) Պէտք է մշտապէս միմեանց հետ ըլլալու պահանջ զգաք:

2) Պէտք է վստահ ըլլաք, որ հանդիպելու, միասին ապրելու, ամուսնանալու նախաձեռնութիւնը երկուքիդ է:

3) Հասկցէք, արդե՞ք ընդհանուր հետաքրքրութիւններ ունիք, որոնք կրնան միատրել ձեզ, երբ կիրքը առաջուան նման ըլլայ այլեւս:

4) Պէտք է հաճոյքով գիրար ծանօթացնէք ձեր մտերիմներուն եւ ընկերներուն ու հպարտանաք

ձեր գուզընկերոջմով:

5) Պէտք է յարգէք մէկդ միւսի գրադմունքները, լսէք գուզընկերոջ տեսակէտը, եթէ նոյնիսկ անիկա կը հակասէ ձեր տեսակէտին:

6) Ցանկալի է, որ երկուքդ ալ հասարակական եւ մտաւոր նոյն մակարդակը ունենաք:

7) Երկուքդ ալ պէտք է յարմարաւէտ զգաք իրարու ընկերակցութեամբ եւ ըլլաք այնպէս, ինչպէս միշտ եղած է:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

Արեւմտեան Մամուլի Արձագանքը

Շարունակուած էջ 2-էն

դը ապրում է աւտորիտար ռեժիմի ներքոյ, իսկ շատ-շատերի ժողովրդավարական ազատութիւնները զգալիօրէն սահմանափակուած են, սակայն ազատութեան ձգտումը կարող է միլիոնաւոր մարդկանց մղել ոտքի կանգնել եւ ձայն պահանջել իրենց կառավարման մէջ», - գրում է պարբերականը:

Ամսագիրը գրուցել է այդչորս «խաչակիրները» հետ, որոնցից մէկը Նիկոլ Փաշինեանն է: Նրա հետ այդ ցուցակում են ընդգրկուած տոգացի բլոգեր, ակտիւստ եւ Տոգոյի նախագահ Ֆոր Գնա-սինգբեի դէմ ուղղուած «Ֆորը պէտք է հեռանայ» շարժման հիմնադիր Ֆարիդա Նաբուրեման, Նիկարագուայի նախագահ Դանիէլ Օրտեգայի դէմ պայքարող էնրիեթ Մարտինեզը եւ Խաղաղութեան Նոբելեան մրցանակի դափնեկիր Վիդեո Բուշամուրի:

«Իմ ժողովրդի սէրն է ստիպել ինձ դուրս գալ խորհրդարանական խմբակցութեան առաջնորդի յարմարաւէտ գրասենեակից եւ 20 դի-

շեր անցկացնել անտառներում, փողոցներում, վրանի մէջ՝ բողոքելով Սերժ Սարգսեանի կառավարման դէմ», - ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի խօսքերն է մէջբերում TIME-ը:

Ամսագիրն տուած մեկնաբանութիւնում Փաշինեանը համոզմունք է յայտնել, որ ժողովրդավարութիւնը Հայաստանում արժեհամակարգ է եւ համոզմունք: «Ես համոզուած եմ, որ մենք ժողովրդավարութիւն կառուցելու, անկախ դատական համակարգ ստեղծելու եւ օրէնքի գերակայութիւնն ամրագրելու ճանապարհին առաջ կը գնանք՝ պաշտպանելով մարդու իրաւունքները եւ տնտեսական մրցակցութիւնը: Մեզ համար ժողովրդավարութիւնը ոչ թէ տարածաշրջանային շահերի կամ արտաքին քաղաքական կողմնորոշման բաղադրիչ է, այլ արժէքների ու համոզմունքների արտացոլում: Ես հաւատում եմ, որ Հայաստանը կը դառնայ աշխարհի հզօրագոյն ժողովրդավարական երկրներից մէկը», - ասել է նա:

«ՀԱՅԵԼԻ»

Սուլթան Էրտողան

Շարունակուած էջ 13-էն

յին ուժերու տկարութիւնը եւ «F-16» օդաչուներու թիւի կրճատումը պատճառ եղան, որ պետութիւնը մեծապէս շահագրգռուի մակերեսային օդային հրթիռներով, եւ այս մէկը եղաւ ռուսական «S-400» հրթիռներու գնման ու ֆրանսական-իտալական հրթիռներ արտադրող «Eurosam» ընկերութեան հետ հակաօդային գէնք արտադրելու պայմանագրի կնքումին պատճառը: Այս բոլորը, սակայն, հսկայական բեռ եղան երկրի տնտեսութեան ուսերուն վրայ:

Թուրքիոյ տնտեսութիւնը մէկ այլ հարուած մըն ալ ստացաւ, երբ Ամերիկայի նախագահ Թրամփ պողպատի եւ ալյումինիումի (aluminium) ներածութեան համար հարկեր որոշեց: Թուրքիոյ պողպատի առեւտուրին դիմագրաւած դժուարութիւնները ասով ալ չսահմանափակուեցան. անիկա կը դիմագրաւէ օտարերկրեայ մրցակցութիւն՝ ի՛ր իսկ հողին վրայ: Ամերիկեան եւ եւրոպական շուկաներուն կողքին, անիկա Ռուսիոյ, Ուքրանիոյ եւ Իրանի աժան պողպատին դէմ կը պայքարի նոյնիսկ իր շուկային մէջ: Յիշենք նաեւ, որ Ամերիկայի եւ Թուրքիոյ միջեւ ընդհանուր առեւտուրը Միացեալ Նահանգների օգտին է: Արդարեւ, 2017ին Թուրքիոյ ներածումները Ամերիկայէն կազմած են 11.9 միլիարտ տոլար, իսկ արտածումները՝ 8.6 միլիարտ տոլար:

Նաեւ, ըստ www.cia.gov կայքին, 2017ի տուալներով՝ Թուրքիոյ ընդհանուր արտածումները կազմած են 157.3 միլիարտ տոլար, իսկ ներածումները՝ 196.8 միլիարտ. Թուրքիոյ արտարժոյթի եւ ոսկրի պահուստները եղած են 107.5 միլիարտ, իսկ անոր արտաքին պարտքը՝ 429.6 միլիարտ տոլար: Այս բոլորով հանդերձ, երբեք կարելի չէ ակնկալել, որ Թուրքիոյ տնտեսական վիճակը պիտի վատթարանայ այն աստիճան, որ երկիրը քայքայուի: Այո՛, լիրալի արժեզրկումը կը շարունակուի՝ վնաս պատճառելով երկրի բնակչութեան եւ տնտեսութեան, սակայն Թուրքիան մեծ երկիր է եւ շատ միջոցներ ունի

զարգացնելու, եթէ՛ ժողովրդավար կառավարութիւն ունենայ:

Ըստ Պոլսոյ «Մարմարա» թեթիւ (տես «Ապարէզ»), Յունիս 20, 2018), «Թուրքիոյ մասնագետներ ու քաղաքագէտներ կը պնդեն, թէ Թուրքիա հասած է տնտեսական կործանման սեմին, մինչ Թուրքիոյ ղեկավարները կը պաշտպանեն այն տեսակէտը, թէ երկիրը կ'ընթանայ դէպի տնտեսական շատ փայլուն ապագայ»: Իր կարգին, համաշխարհային համբաւի տիրացած տնտեսագէտ Տարօն Աճէմօղլու անխուսափելի կը նկատէ Թուրքիոյ մէջ տնտեսական ծանր տագնապ մը: «Կարելի չէ սպասել հրաշքի մը: Համայնապատկերը սեւ է, անխուսափելի է տագնապը: Բազմաթիւ ընկերութիւններ պիտի սնանկանան, անգործութիւնը աւելի պիտի սաստկանայ, եւ կը մաղթենք, որ աւելի գէշը չպատահի», ըսած է ան: Աճէմօղլու նաեւ Թուրքիոյ «Ճումհուրիյէթ» թերթին յայտնած է, որ «Թուրքիոյ տնտեսութիւնը կը դիմագրաւէ կտրուկ անկումի վտանգը»:

Վերջապէս, մեծ երկիրները, ինչպէս՝ Ամերիկան, Ռուսիան, Չինաստանը, եւ Եւրոմիութեան հզօր երկիրները (Գերմանիա, Անգլիա, Ֆրանսա, Իտալիա), ամենայն հաւանականութեամբ թոյլ պիտի չտան, որ Թուրքիան բոլորովին քայքայուի: Նախ՝ անոնցմէ իւրաքանչիւրը իր շահերը ապահովել կը ձգտի, ապա, անոնցմէ ոմանք, դաշնակից ըլլալով հանդերձ, իրարու դէմ մրցակցութեան ելած են՝ թուրքերուն բարեկամութեան ձգտելով, ամէն տեսակէտով օգտուելու համար անկէ (երբ Գերմանիա Թուրքիոյ շուկայէն հեռանայ, Անգլիա աւելի կը ներխուժէ): Նոյնպէս երկու հակառակ քաղաքականութիւններ վարող կողմերը՝ Ամերիկան եւ Ռուսիան, կ'աշխատին սիրաշահիլ Թուրքիան (երբ Ամերիկա մէկ քայլ հեռանայ, Ռուսիա երկու քայլ կը մօտենայ Թուրքիոյ): Չինաստանն ալ միշտ ներկայ է այնտեղ, իսկ Թուրքիան, լաւատեղեակ ըլլալով այս բոլորէն, ինչպէս նաեւ իր աշխարհագրական կարեւոր դիրքէն՝ ամենալաւ կերպով կը փորձէ օգտուիլ բոլորէն:

Ընկ. Կիրակոս Թիւթունճեանի Ելոյթը

Շարունակուած էջ 6-էն

նահերթ համարելով հայրենիքի անվտանգութիւնը եւ կայունութիւնը զօրավիգ հանդիսացանք հայրենակերտումի ջանքերուն:

Մենք, հայրենիքի հզօր պետականութեան մէջ կը տեսնենք Արցախի միջազգային ճանաչումը, ինչպէս նաեւ մեր պահանջատիրական պայքարին յաղթանակը:

Հայրենիքի բարգաւաճումը եւ կայունութիւնը Հնչակեան Կուսակցութեան համար կը մնան թիւ մէկ մտահոգութիւն: Հնչակեան Կուսակցութեան համար հայրենիքի անկախութեան ամրապնդումը, ընկերային արդարութեան վրայ յենած պետականութիւնը եղած է ու պիտի մնայ անոր գաղափարախօսութեան ամենակարեւոր դրոյթներէն մէկը:

Ուղեղներու արտահոսքը, հայրենալքումը, ստուերային տնտեսութիւնը, մենաշնորհութիւնը, չարաշահումներն ու յափշտակումները, հովանաւորչութիւնը դժոխային կացութեան մատնած էին հայրենի ժողովուրդը, ինչ որ անընդունելի եւ խորթ կը մնայ Հնչակեան Կուսակցութեան համար:

Մենք, Հայաստանի անկախութեան առաջին իսկ օրէն, հայրենի պետական շրջանակներու մէջ բոցն դրած ցաւալի երեւոյթներուն դէմ կենալով, համակարգի փոփոխութեան մէջ տեսած ենք մեր ժողովուրդին բարօրութիւնը, հայրենիքի վերելքը: Մենք այն քիչերէն եղանք, որ անկախութեան առաջին իսկ օրերէն յանդգնութիւնը ունեցանք ազդարարելու համակարգի փոփոխութեան, նոր մտածելակերպի, նոր գործելաոճի, ընկերային արդարութեան, օրէնքի գերիշխանութեան անհրաժեշտութիւնը, որպէսզի բոլորին հաւաքական ջանքերով զարգանայ, բարգաւաճի եւ հզօրանայ համայն հայ ժողովուրդի վերջին հանգրուան եւ Քսաններուն հայրենիք Հայաստանը:

Մենք, Սփիւռքի եւ Հայաստանի մեր բոլոր շարքայիներով եւ համակիրներով գործունեայ մասնակցութիւն ունեցանք հայրենիքի մէջ Ապրիլ-Մայիս ամիսներուն ծնունդ առած ժողովրդային ընդվզումներուն: Մեր շարքայիներէն շատեր՝ մեր երիտասարդական, համալսարանական միաւորները, սկառական շարժումները, մայրաքաղաք Երեւանի մէջ մեր փողերախումբը առաջին դիրքերու վրայ մասնակցեցան Հայաստանի եւ Երեւանի տարբեր պողոտաներու, հրապարակներու վրայ փտածութեան, կաշառակերութեան, ստուերային տնտեսութեան դէմ մեր ժողովուրդի գաւակներուն արդար ընդվզումին: Մասնակցեցանք ժողովրդային ընդվզումներուն, որովհետեւ կը հաւատանք ժողովրդավարութեան եւ ընկերային արդարութեան:

Տարիներ շարունակ սփիւռքի եւ հայրենիքի տարբեր ամպիոններէն օրէնքի գերիշխանութիւն պահանջելէ ետք, վերջապէս անցնող Ապրիլ-Մայիս ամիսներուն հայրենիքի հորիզոնին վրայ ծնունդ առաւ մեր համոզումներուն հարագատ ժողովրդային արդար շարժումը: Շարժում, որուն մասնակցեցաւ համայն հայ ժողովուրդը: Թաւշեայ Յեղափոխութիւնը տուաւ մեր հետապնդած հայրենիքին ազդանշանը:

Այսօր, այս ամպիոնէն անգամ մը եւս կու գանք մեր զօրակցութիւնը վերահաստատելու վարչապետ Նիկոլ Փաշինեանի հայրենակերտումի յանդուգն ջանքերուն: Մեր կուսակցութեան բոլոր լծակները պիտի դնենք ի սպաս ազատ, օրէնքի գերիշխանութեան եւ ժողովրդավարական պետութիւն կառուցելու վարչապետ Նիկոլ Փաշինեանի քայլերուն:

Մեզի համար անընդունելի պիտի մնան հայրենի ժողովուրդին համեստ ապրուստը իւրացնող, հայրենիքի սահմանները կեանքի գնով պաշտպանող մերօրեայ ֆետայիներուն իրաւունքները չարաշահող աւազակաբարոյ անհատներն ու կազմակերպութիւնները: Մէկ խօսքով, ոչ մէկ զիջում փտածութեան եւ Ստուերային տնտեսութեան առջեւ: Այս իմաստով ուրախ ենք յայտնելու եւ հպարտութեամբ կ'արձանագրենք, որ Հնչակեան Կուսակցութիւնը հայրենիքի վերելքով, ժողովրդավարութեան ամրապնդումով, հայրենիքի բարգաւաճումով մտահոգ մեծաթիւ բարեկամներ ունի Միացեալ Նահանգներու մէջ:

Ազատ, գերիշխան եւ անկախ հայրենիքի տեսլականը համոզում է մեզի համար եւ ոչ կարգախօս:

Լուսթիւնը նոյնքան դատապարտելի է, որքան մեղաւկցութիւնը եւ յանցագործութիւնը:

Այս է Պայագիտի հրապարակէն մեզի հասած աւանդը, եւ այսօր անգամ մը եւս կ'երդնունք հաւատարիմ մնալ Փարամազներու, տոքթոր Պեննէներու եւ Վանիկներու մեզի կտակած ուխտին:

Ի թիւհատը Քսաններ խլեց մեր ժողովուրդէն, փորձեց բնաջնջել մեր ժողովուրդը: Այսօր քսան հազարներ ազատ հայրենիքէն, Արցախէն եւ Սփիւռքէն հաշուետուութիւն կը պահանջէն ցեղասպանէն:

Եւ հաւատացէք յարգելի ներկաներ, պիտի գայ ճանաչումի, հաշուետուութեան եւ հատուցման օրը, այնքան ժամանակ որ մեր ժողովուրդը կը ծնի Փարամազներ, Վանիկներ, Տոքթ. Պեննէներ, կը ծնի Եռաբլուրի մէջ ննջող նահատակներ:

Բիւր յարգանք Քսաններուն, Բիւր յարգանք հայ ժողովուրդի բոլոր նահատակներուն:

**OFFICE SPACE FOR RENT
IN PASADENA**

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

**1060 North Allen Ave
Pasadena, CA 91104**

**Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Յետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506**

ՅՈՎԱԷՓ ՄԱԹՈՍԵԱՆ

Վերջերս իր մասկանացուն կնքեց Լիբանանի Հ.Մ.Մ.ի ֆուտբոլի առաջին խումբի խաղացողներին Յովսէփ Մաթոսեան, ստորեւ կու տանք իր կենսագրականը:



Ան ծնած է 8 Յունիս 1940 թուին, Սուրիոյ Պանիաս քաղաքը, որմէ ետք ընտանեօք փոխադրուած են Լիբանան:

Յովսէփ շատ կը սիրէր ֆուտբոլ խաղալ: Փոքր տարիքին մաս կազմած է Պէյրութի Թիւրօ թաղի ֆուտբոլի խումբին: Պատանի տարիքէն իսկ սիրուած էր որպէս աչքառու եւ ճկուն մարզիկ: Փոքր տարիքին իր մեծ եղբայրը Դաւիթ Մաթոսեան տեսնելով եղբօր սէրը ֆուտբոլի մէջ, զինք քաջալերած է որ շարունակէ իր սիրած մարզաձեւը: Սակայն հայրը շատ համաձայն չէր: Քանի մը ամիս ետք պատահամբ ներկայ կ'ըլլայ պատանիներու խաղի մը ուր իր որդին կը տեսնէ այդտեղ խաղաղաշտին վրայ, հոն տեսնելով իր գաւկիտ խաղը ու տաղանդը, կը համոզուի ու կը թոյլատրէ ու իր հաւանութիւնը կու տայ շարունակելու իր ֆուտբոլի հանդէպ ունեցած սէրը:

1960ին Յովսէփ մաս կը կազմէ Պէյրութի Հ.Մ.Մ.ի խումբին ուր իր փայլուն խաղարկութեամբ կ'ուրախանան իր ընտանիքն ու շրջապատը: Յովսէփ ըլլալով լաւ խաղաղցող մը: Իր արձանագրած կոլերով բազմաթիւ յաղթանակներ ապահոված է Լիբանանի Հ.Մ.Մ.ի խումբին:

1963ին Հ.Մ.Մ. կը հրաւիրուի Կիպրոս Omomia ֆուտբոլի խումբի կողմէ ունենալու բարեկամական մրցում մը: Մրցումի ընթացքին շատ կոպիտ խաղարկութեամբ կը վերաւորուի ու կը տեղափոխուի հիւանդանոց, ուր կը մնայ 15 օր: Կիպրոսի Հ.Մ.Մ.ի պատասխանատուները զինք կը խնամեն, որմէ ետք կ'ուղարկեն Լիբանան:

Յովսէփ Մաթոսեան աւելի քան 10 տարի մաս կազմած է Հ.Մ.Մ.ի ֆուտբոլի առաջին խումբին, որպէս ձախ յարձակող:

1970 թուին Յովսէփ հիմնական բնակութիւն կը հաստատէ Լոս Անճելոս: Երկար տարիներ կ'աշխատի օդանաւային ընկերութեան մը մէջ, որմէ ետք քաղցկեղի անողոք հիւանդութեամբ կը տառապի երկար տարիներ: Յովսէփի տկար մարմինը չդիմանալով հիւանդութեան իր հոգին կ'աւանդէ Յուլիս 7, 2018ին:

ՅԱՒԱԿՅԱԿԱՆ

ՅՈՎԱԷՓ ՄԱԹՈՍԵԱՆԻ մահուան տխուր առթիւ Հ.Մ.Մ.ի վարչութիւնը իր ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն եւ համայն հարազատներուն: Հ.Մ.Մ.ի Լոս Անճելոսի վարչութիւն

ՅԱՒԱԿՅԱԿԱՆ

ՎԱԼԱՆԹԻՆ ԻՄԱՍՏՈՒՆԵԱՆ ԱՂԱՄԱՆՈՒԿԵԱՆԻ մահուան առթիւ Տէր եւ Տիկ. Սահակ եւ Անահիտ Գըթըֆեաններ իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ամուսնոյն, ընտանեկան պարագաներուն, ինչպէս նաեւ իմաստունեան ընտանիքին: Այս առթիւ \$200 կը նուիրեն «Մասիս»ին:

«ՄԵՆՔ ԽՈՆԱՐՅ ԺՈՂՈՎՈՐԴ ԵՆՔ»

Շարունակուած էջ 14-էն
երաժշտութեան ընդմէջէն: Պատանիներ, որոնք պաշտամունքի ընթացքին երգեցին եւ պարեցին... Երեւի քիչ մը տարօրինակ էր ինծի-մեզի համար, բայց անոնք կ'արտայայտէին իրենց սէրը... Եւ սէրը Աստուծոյ, իրենց կեանքերուն, բայց նաեւ՝ իրենց երկրին: Այն երկիրը, որ անոնք կ'ապրին եւ կ'ուզեն ապրիլ... Ես ալ ապրեցայ այդ օր զգացումը: Երաժշտութիւնը որքան կը հարստացնէ մարդու հոգին, եւ ան՝ նոյն մարդը, կ'ապրի այդ հարստութիւնը՝ սիրելով կեանքը եւ հողը... Եւ վերջապէս, որքան ճիշդ է եղեր հայ բանաստեղծը, որ սիրած է երաժշտութիւնը այն աստիճան, որ ուզած է նոյնիսկ «երգելով մենուի»... Քուպան խաղող երկիր է ու նաեւ՝ ապահով: «Մենք խոնարհ ժողովուրդ ենք,- ըսաւ Խոնէլ:- Քուպացիներ կը սիրեն ընտանիքը, բարեկամը եւ հաղորդակցութիւնը»: «Եւ ասոր համար ալ կը բաւարարուի

իր ունեցածովը», եզրափակեց ան: Եւ այս արդէն զգայացունց այն իրականութիւնն էր, որուն հանդիպեցայ եւ, աւելի ճիշդ, ընտելացայ իմ կեցութեանս ընթացքին: Բայց նաեւ այս երեւոյթը տեսայ մանուկներուն եւ անոնց ուրախութեան մէջէն... Կիրակի, 10 յունիս: Քուպայի արեւմտեան շրջանի մէկ գեղեցիկ հովիտ-ձորի մը փոքր քաղաքի մը մէջ աւելի քան երեք հարիւր մանուկներու պատանիներ հաւաքուած էին եկեղեցիի մը շրջափակին մէջ, որովհետեւ ունէին յատուկ յայտագիր: Եւ այդ յայտագիրը ընթացքին տեղի ունեցաւ Աստուածաշունչի բաժանումը, յատուկ՝ իրենց տարիքին: Մանուկներ, որոնք առաւելաբար կու գային բարեկեցիկ ընտանիքներէ եւ այդ շրջանի տարբեր գիւղերէն: Բայց իրենց այդ բարեկեցիկ վիճակին մէջ մանուկներ էին, որոնք ունէին գոհունակութիւն մը: Բայց արդեօք պիտի համարձակէի ըսելու բաւարարութիւն... Իմ-մեր իրականու-

ՅԱՒԱԿՅՈՒԹԻՒՆ

Կիլիկեանի մեծ ընտանիքը եւ Կիլիկեան Բարեգործական Միութեան վարչութիւնը կը սգան Հոգեւորական Նուիրեալ գործիչ եւ ազգային բարերար՝ Արժ. Տ. ԳԱՌՆԻԿ ԱՒԱԳ-ՔՉՆՅ. ՀԱԼԼԱՃԵԱՆԻ մեծ կորուստը:

Մեր խորագրաց ցաւակցութիւնները յայտնելով հանգուցեալի այրիին եւ ընտանեկան պարագաներուն կը մաղթենք համբերութիւն եւ հոգեկան խաղաղութիւն:

ԿԻԼԻԿԵԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՄԱՐՍԻ ՏԱՐԲԵՐ ՀԱՏՈՒԱԾՆԵՐՈՒ ՎՐԱՅ

Շարունակուած էջ 17-էն

փոխարէն կը նախընտրէք զբօսնել լուսնի լոյսի տակ կամ սիրած անձնաւորութեան հետ մէկ գաւաթ գինիով ընթրիք կազմակերպել: Դուք կրնաք գնահատել մանրուքները եւ նկատել գեղեցիկը իր բոլոր դրսեւորումներով: Ձեր կողքին թեթեւ է, ազատ եւ հաճելի: Դուք հակուած չէք առաջնորդ ըլլալու, սակայն ամուր մարդ էք եւ միշտ կը զգաք ձեր ներքին ազատութիւնը: - Մէջքի խալ: Կամային եւ

սկզբունքային մարդ էք, որ հաստատ գիտէ, թէ ինչ կ'ուզէ: Երբեմն կրնաք կոպիտ ըլլալ, բայց միշտ արդարութեան կողմնակից էք: Դուք ազնիւ էք, երբեք չէք խաբեր, չէք բամբասեր եւ ուրիշը մատով ցոյց չէք տար: Կրնաք ձեր խօսքին տէրը ըլլալ, երբեք չէք դաւաճաներ, չէք հրասթափեցներ: Եթէ դուք մէջքի վրայ խալ ունիք, ուրեմն ամենայն հաւանականութեամբ միշտ կը պաշտպանէք փոքրերն ու տկարները, իսկ անոնց նեղացնողը անպայման պատասխանատուութեան կ'ենթարկէք:

ՀԱՓԱՁԱՆՑ ԶԳԱՑՄՈՒՆՔԱՅԻՆ ՄԱՐԴՈՑ

Շարունակուած էջ 17-էն

կան զգացմունքներ- Յաճախ անոնց կը փնտվեն թատերականութեան, մակերեսային պահուածքի համար: Սակայն, իրականութեան մէջ, այդպիսի մարդոց ապրումները կարելի չէ մակերեսային անուանել: Հակառակը, անոնք ամէն ինչ շատ նուրբ կը զգան: Ուղղակի այդպիսի մարդիկ կը վախճան ընկճախտային զգացողութիւններէն՝ տիրութենէն, տառապանքէն:

Այդ պատճառով անոնք յաճախ արտաքինապէս տրամաթիւ վիճակի մէջ են, կրկին անգամ պաշպանուելով: Արագ կը վերապրին զգացմունքը, սակայն չեն ձգեր, որ անիկա խոր եւ երկար ժամանակով կլանէ իրենց: Այդ պատճառով, այդպիսի մարդիկ սովորաբար դրական են եւ լաւատես:

4) Անոնք ձեզ գիտակցաբար խաղի չեն ենթարկեր- Չարգացած

զգացմունքային մթնոլորտի պատճառով անոնք աւելի քիչ բանական են: Անոնց դժուար է հասկնալ, քանի որ իրենք ալ կը դժուարանան վերլուծելու եւ հերթականութեամբ շարադրելու իրենց միտքերը:

Յուցադրական պահուածքը նոյնպէս չմտածուած, ինքնաբերական միջոց է ուշադրութիւն գրաւելու համար:

5) Անոնք կը պարզեւն ուժ եւ զգացմունքներ- Աւելի յաճախ այդպիսի մարդիկ կ'ընտրեն այնպիսի մասնագիտութիւններ, որոնք իրենց թոյլ կու տան ըլլալու ուշադրութեան կեդրոնին՝ ուսուցչուհի, դերասան, քաղաքական գործիչ: Անոնց հարկաւոր է համընդհանուր ճանաչում, քանի որ ատիկա իրենց կու տայ պիտանիութեան խաբկանք, ա՛յն, որ անոնց կը յարգեն եւ կը սիրեն: Եւ ի հարկէ, անոնք ունին ուժ, որմով ունակ են կիսուելու, ոգեշնչելու եւ շարժառիթ ընձեռելու:

«Յոյց տուր ինծի երկիր մը, որ հարցեր չունի», Խոնէլն է դարձեալ: «Մենք ալ հարցեր ունինք, բայց այդ բոլորին մէջէն կը հաւատանք, որ մեր երկիրը պիտի շինենք», եզրափակեց ան:

Եւ չուշացաւ իմ՝ հայր'ւ գիտակցութիւնը:

Հայն ալ այս օրերուն սկսած է շինել եւ վերաշինել իր հայրենիքը...

Եւ երկիր շինելու համար արժէ հաւատալ արժէքի համաչափին: Այն արժէքի համաչափին, որ մեզի կրնայ դարձնել խոնարհ... Եւ խոնարհութիւնը կը սանձէ ընչաքաղցողութիւնը եւ կը ստեղծէ բաւարարութիւն: Եւ բաւարարութիւնը հոգեւոր գիտակցութիւն է: Հոն, ուր կրնաս բաւականանալ քու ունեցածովդ, բայց նաեւ՝ գիտակցիլ դիմացինին պէտքերն եւ անոր անհրաժեշտութեանը... Բայց նաեւ՝ բաժնեկցիլ... Եւ այս բաւարարութիւնը անպայմանօրէն կը շինէ... Կը շինէ բոլորս... Քեզ եւ գիտ: Եւ կը շինէ մեր՝ հայուն երկիրը...

«Մենք խոնարհ ժողովուրդ ենք»: Քուպայի օրինակը, բայց նաեւ ըլլայ հայունը... Իմ եւ իւրաքանչիւրիս...

ՄԱՐԶԱԿԱՆ

Ֆրանսայի Հաւաքականը՝ 2018թ Աշխարհի Ախոյեան



Ֆուտպոլի 2018 թուականի աշխարհի առաջնութեան եզրափակիչը դարձաւ մրցաշարի իսկական զարդը:

Ֆրանսայի եւ իտալացի հաւաքականները հենց սկզբից դիմեցին ակտիւ գործողութիւններին եւ փորձեցին արագ կոլ խփել: Դա առաջինը յաջողուեց Ֆրանսայի հաւաքականին, սակայն նրան օգնութեան ձեռք մեկնեց իտալացի ընտրանու յարձակող Մարիօ Մանջուկիչը, որը պաշտպանուելիս ակամայից գրաւեց սեփական դարպասը:

Խորուակները նոյնպէս արագ կոլ խփեցին այս խաղում: 28-րդ րոպէին տուգանային հարուածի խաղարկութիւնից յետոյ աչքի ընկաւ Իվան Պերիշիչը: Սակայն տասը րոպէ անց ֆրանսացիները 11մ հարուածի իրաւունք ստացան, որը վստահ իրացրեց Անտուան Գրիզմանը:

Երկրորդ խաղակէստում իտալացի ընտրանին էլ աւելի մեծ ուժերով սկսեց գրոհել, սակայն դրանից աւելի շատ օգտուեց Ֆրանսայի ընտրանին, որը երկու սուր հակադրոհներին հաշուին եւս երկու կոլ խփեց: Աչքի ընկան Պոլ Պոգբան ու Կիլիան Մբայէն:

Խորուակների յարձակող Մարիօ Մանջուկիչը 69-րդ րոպէին կրճատեց հաշուի տարբերութիւնը: Մնացած ժամանակում նրանք շարունակում էին անընդհատ գրոհել, սակայն այդպէս էլ չկարողացան նոր յաջողութեան հասնել:

Այդպիսով, Ֆրանսայի հաւաքականը պահպանեց 4:2 յաղթական հաշիւը եւ իր պատմութեան մէջ երկրորդ անգամ հռչակուեց աշխարհի ախոյեան:

Խորուակի ընտրանին իր կարճատեւ պատմութեան ընթացքում առաջին անգամ դարձաւ աշխարհի առաջնութեան փոխախոյեան:

ԱՎ-2018-ի Լաւագոյն Ֆուտպոլիստների Տասնեակը

Բրիտանական Sky Sports ներկայացրել է Ռուսաստանում աւարտուած աշխարհի առաջնութեան լաւագոյն ֆուտպոլիստների տասնեակի իր տարբերակը՝ առաջին տեղը տալով աշխարհի նորընծայ ախոյեան Ֆրանսայի հաւաքականի յարձակող, մրցաշարի լաւագոյն երիտասարդ խաղացողի մրցանակին արժանացած, 19-ամեայ Կիլիան Մբայէին: Լաւագոյն ֆուտպոլիստի մրցանակը ստացած, իտալացի հաւաքականի եւ Մարիոյի «Ռեալի» կիսապաշտպան Լուկա Մոդրիչը չորրորդ տեղում է:

1. Կիլիան Մբայէ (Ֆրանսա)
2. Էդեն Ազար (Պելզիա)
3. Նեյմար (Պրագիլիա)
4. Լուկա Մոդրիչ (Խորուակիա)
5. Կիրան Տրիպիեր (Անգլիա)
6. Անտուան Գրիզման (Ֆրանսա)
7. Տիբօ Կուրտուա (Պելզիա)
8. Պոլ Պոգբա (Ֆրանսա)
9. Կեւին Դէ Բրուչէ (Պելզիա)
10. Ֆիլիպպէ Կոուտինիօ (Պրագիլիա)

Կրիշտիանու Ռոնալդու. «Հասկանում եմ, Որ Բարդ Առաջնութիւն եմ Տեղափոխուել»

Պորտուգալիայի հաւաքականի ֆուտպոլիստ Կրիշտիանու Ռոնալդուն խօսել է «Եռվենտուս» տեղափոխուելու մասին:

«Ես սիրում եմ մարտահրաւէրներ: Գիտեմ, որ տակտիկական տեսանկիւնից բարդ առաջնութիւն եմ տեղափոխուել: Չեմ սիրում ուղղակի նստել եւ բաւարարուել ձեռք բերածով: Հաւատում եմ ինձ եւ խաղընկերներին: Վստահ եմ, որ ամէն ինչ լաւ է լինելու: Հանգիստ եւ վստահ եմ: Ախոյեանների լիգան ցանկանում է յաղթել իւրաքանչիւր ակումբ: Մենք պայքարելու ենք այդ տիտղոսի համար: «Եռվենտուս» ինձ հիանալի հնարաւորութիւն է տալիս, ինչի համար շնորհակալ եմ: Նրանք գնահատում են ինձ եւ իմ խաղատոճը», - մամուլի ասուլիսի ժամանակ ասել է Ռոնալդուն:



Տրանսֆերի համար «Եռվենտուսը» 2 տարուայ ընթացքում Մարիոյի «Ռեալին» կը վճարի 100 միլիոն եւրօ: Պորտուգալիայի հաւաքականի 33-ամեայ խաղացողը իտալական թիմի հետ կնքել է 4 տարուայ պայմանագիր եւ տարեկան կը վաստակի 30 միլիոն եւրօ:

Նովակ Ջոկովիչը 4-րդ Անգամ Յաղթեց Ուիմբլդոնի Մրցաշարում

Սերբ թենիսիստ Նովակ Ջոկովիչը Ուիմբլդոնի մրցաշարի եզրափակիչ խաղում յաղթելով հարաւաֆրիկացի Կեւին Անդերսոնին՝ տիրեց գլխաւոր մրցանակին:

Աշխարհի 21-րդ ռակետը վստահ սկսեց հանդիպումը եւ մեծ առաւելութեամբ յաղթանակ տարաւ առաջին երկու սեթերում՝ 6:2, 6:2: Երրորդ սեթում փոքրիկացի թենիսիստը յաջող մեկնարկեց եւ փորձեց բեկում մտցնել, սակայն Նովակ Ջոկովիչը դրսեւորելով կամային բարձր յատկանիշներ, նախ հաւասարեցրեց հաշիւը, ապա թայ-բրեյքում յաղթանակ տարաւ՝ 6:6, 7:3:

Սերբ թենիսիստը չորրորդ անգամ նուաճեց Ուիմբլդոնի ախոյեանի կոչումը, իսկ ընդհանուր առմամբ 13-րդ անգամ յաղթեց Մեծ սաղաւարտի մրցաշարում:



«Բարսելոնային» Առաջարկել Եմ Գնել Պոգբային

Ֆրանսայի հաւաքականի եւ անգլիական «Մանչեսթեր Եունայթեդի» կիսապաշտպան Պոլ Պոգբան կարող է կարիերան շարունակել «Բարսելոնային», յայտնում է Sport.es-ը: Նշում է, որ կատալոնական ակումբին առաջարկել են 150 միլիոն եւրօյով գնել Պոգբային:



Ֆրանսացու հեռանալու մասին լուրերը սկսեցին տարածուել անցած մրցաշրջանում, երբ նա կորցրեց տեղը «Մանչեսթեր Եունայթեդի» մեկնարկային կազմում: Պոգբան քննադատուած էր պորտուգալացի ժողջ Մոուրինիոյի կողմից:

«Բարսելոնան» այժմ կիսապաշտպանի կարիք ունի, քանի որ թիմից հեռացել են Պաուլինիոն եւ Անդրես Ինչեստան:

Յիշեցնենք, որ Պոգբան Ֆրանսիայի հաւաքականի կազմում դարձաւ աշխարհի ախոյեան:


Ալեքսիս Սանչեսը 2ի Ստացել ԱՄՆ-ի Մուտքի Արտոնագիր

Անգլիական «Մանչեսթեր Եունայթեդի» չիլիացի յարձակող Ալեքսիս Սանչեսը թիմի հետ չի մեկնել ԱՄՆ, քանի որ չի ստացել մուտքի արտոնագիր, հաղորդում է BBC-ն:

Այս տարուայ Փետրուարին ֆուտպոլիստը ինդիաններ էր ունեցել Սպանիայի հարկային մարմինների հետ: Նշում է, որ այդ պատճառով է ԱՄՆ-ն մերժել Սանչեսին:

Յարձակողի իրաւաբաններն այժմ փորձում են կարգաւորել այդ հարցերը, սակայն «Մանչեսթեր Եունայթեդը» արդէն առանց ֆուտպոլիստի մեկնել է ԱՄՆ, որտեղ մի քանի ընկերական հանդիպումներ են նախատեսուած:

Յուլիսի 20-ին ժողջ Մոուրինիոյի գլխաւորած թիմը կը խաղայ մեքսիկական «Ամերիկայի» հետ:



Արսէն Բարբեանը՝ Ուշուի Աշխարհի Ախոյեան

Յուլիսի 9-15-ը Պրագիլիա քաղաքում անց է կացուել պատանիների եւ երիտասարդների ուշուի աշխարհի առաջնութիւնը, որին մասնակցել են 45 երկրների 400 մարզիկ:

Ինչպէս տեղեկացնում է Արցախի սպորտի վարչութեան ֆէյսպուքեան էջը, մարզիչ Դաւիթ Գրիգորեանի գլխաւորութեամբ արցախցի Արսէն Բարբեանը 48 կգ քաշային կարգում դարձել է աշխարհի ախոյեան, իսկ վարդան Աբրահամեանը 65 կգ կարգում՝ պրոնգէ մետալակիր:

Երկու մարզիկներն էլ այդ մրցումներում ներկայացրել են Հայաստանը: